Ռոբերտ Ա. Թաթոյան
պատմական գիտությունների թեկնածու

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՍՂԵՐԴԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ[1]

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Հայկական հարց, Բիթլիսի նահանգ, Սղերդի գավառ, հայ բնակչության թվաքանակ, վիճակագրություն, ժողովրդագրություն:

Ներկա աշխատանքի նպատակն է հաշվարկել Արևմտյան Հայաստանի շրջաններից մեկի՝ Օսմանյան կայսրության Բիթլիսի (Բաղեշ) նահանգի (թուրքերեն՝ վիլայեթ) Սղերդի գավառի (սանջակ) հայ բնակչության թվաքանակը Հայոց ցեղասպանության նախօրյակին:

Վերոնշյալ նպատակից բխել են հետազոտական հետևյալ հիմնական խնդիրները.

– տալ Հայոց ցեղասպանությանը նախորդող շրջանի՝ 1878-1914 թթ. Սղերդի գավառի վարչատարածքային բաժանման պատկերը,

– առանձին ներկայացնել Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ. օսմանյան, հայկական, ռուսական և արևմտյան հիմնական վիճակագրական սկզբնաղբյուրների տվյալները,

– ըստ Սղերդի գավառի մանր վարչատարածքային միավորների՝ գավառակների (թուրքերեն՝ կազա)՝ համադրել հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրությունները, հատկապես հայաբնակ բնակավայրերի ցուցակներ պարունակող վիճակագրական հիմնական սկզբնաղբյուրների տվյալները, այդ տվյալների համադրման, համեմատական վերլուծության միջոցով և հիման վրա տալ Մեծ եղեռնի նախաշեմին գավառի հայ բնակչության թվաքանակի սեփական հաշվարկը:

* * *

Որպես Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի հիմք՝ մենք ընդունել ենք 1913-1914 թվականների ընթացքում Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հրահանգով Օսմանյան կայսրության բոլոր նահանգներում և այդ թվում՝ Բիթլիսի նահանգի տարածքում հայկական եկեղեցական-թեմական իշխանությունների կողմից իրականացված արևմտահայության հաշվառման (մասնագիտական գրականության մեջ նաև հայտնի է որպես Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար[2]) տվյալները՝ համադրելով և լրացնելով

1 Հոդվածը ստացվել է 27.02.2020 և ընդունվել տպագրության՝ 13.04.2020:

2 Տվյալ ուսումնասիրության մեջ *հաշվառում, մարդահամար, վիճակացույց* բառերը մենք օգտագործում ենք որպես հոմանիշներ՝ ընդունելով, սակայն, որ ինչպես օսմանյան կառավարության, այնպես էլ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ վիճակագրության հավաքմանն ուղղված միջոցառումները չեն անցկացվել ժամանակակից մարդահամարներին ներկայացվող չափանիշներին համապատասխան: Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամարի մասին մանրամասն տե՛ս Ռոբերտ Թաթոյան,

դրանք մեր տրամադրության տակ առկա այլ արժանահավատ տվյալների հետ (Մեծ եղեռնը վերապրածների կողմից իրենց հայրենի բնակավայրերի մասին հաղորդվող տեղեկություններ և օժանդակ այլ սկզբնաղբյուրներ):

Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամարի շրջանակներում Սղերդի առաջնորդարանի կողմից 1913 թ. պատրաստված վիճակացույցի տվյալները՝ հաշվարկի հիմքում դնելը մենք պայմանավորում ենք հետևյալ հիմնական նկատառումներով.

1. հաշվառումը կատարվել է մի մարմնի կողմից, որն ի պաշտոնե ներկայացնում էր Օսմանյան կայսրության հայ համայնքը, ուներ 1863 թ. ազգային սահմանադրությամբ սահմանված լիազորություններ և, ինչը գուցե ավելի էական է, լծակներ (թեմական կառույցների ցանց, տարածքին ծանոթ հոգևորականներ)՝ արևմտահայության առավել ամբողջական հաշվառում իրականացնելու համար,
2. Սղերդի առաջնորդարանի՝ 1913 թ. վիճակացույցը գավառի հայ բնակչության՝ Մեծ եղեռնին ժամանակագրական առումով առավել մոտ իրականացված հաշվառումն է,
3. Սղերդի առաջնորդարանի՝ 1913 թ. վիճակացույցի տվյալները մեզ հասած սկզբնաղբյուրներից առավել մանրամասնն ու ամբողջականն են. առկա են գավառի բոլոր վարչատարածքային միավորների հայաբնակ բնակավայրերի ցանկները:

Դրա հետ մեկտեղ, պետք է արձանագրել, որ 1913 թ. Սղերդի առաջնորդարանի կողմից պատրաստված վիճակագրության հիմքում դրված են իրականից ցածր օսմանյան հաշվառման տվյալները: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Սղերդի թեմը տարբեր առարկայական և ենթակայական պատճառներով (ժամանակի սղություն, ֆինանսական և կազմակերպչական ռեսուրսների պակաս և այլն) ի վիճակի չի եղել սեփական ուժերով բնակչության հաշվառում իրականացնել և դրա փոխարեն տվյալներ է վերցրել օսմանյան իշխանության տեղական մարմիններից, մասնավորապես՝ բնակչության հաշվառման վարչության (Nüfus-u Umumi Idaresi) տեղական բաժանմունքից[3]: Նշված հանգամանքը նույնպես պայմանավորում է այդ տվյալները այլ արժանահավատ սկզբնաղբյուրների կողմից հաղորդած տեղեկությունների հետ համադրելու, համեմատելու, ճշտելու, փոխլրացնելու անհրաժեշտությունը:

Ցավոք, մեզ չի հաջողվել գտնել և հայկական սկզբնաղբյուրների կողմից հաղորդվող տվյալների հետ համեմատել 1878-1914 թթ. ընթացքում օսմանյան կառավարության կողմից անցկացված հաշվառումների կամ մարդահամարների և ոչ մի ցուցակ, որտեղ կներկայացվեր Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակն ըստ բնակավայրերի: Եթե անգամ դրանք և պահպանվել են թուրքական

Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին (Երևան, ՀՑԹԻ, 2015), 92-115:

3 Օսմանյան կառավարության վիճակագրական համակարգի մասին մանրամասն տե՛ս Stanford J. Shaw, "The Ottoman Census System and Population, 1831-1914," *International Journal of Middle East Studies* 9, no. 3 (1978), 325-338:

արխիվներում, ապա առ այսօր չեն դրվել գիտական շրջանառության մեջ և հայտնի չեն անգամ օսմանյան վիճակագրությամբ զբաղվող և օսմանյան արխիվներում նյութերի հետ աշխատած թուրք և արևմտյան ուսումնասիրողներին (Սթենֆորդ Շոու, Քեմալ Կարպատ, Ջասթին Մաք-Քարթի)[4]:

Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառի տվյալ գավառակի կազմում ընդգրկված հայաբնակ բնակավայրերի ցանկը կազմելու հարցում մենք առաջնորդվել ենք Սղերդի առաջնորդարանի՝ 1902 և 1913 թթ. վիճակացույցների ցանկերով, ինչպես նաև հաշվի է առնվել Հայկական համառոտ հանրագիտարանի «Բիթլիսի նահանգ» բառահոդվածում ներկայացվող ցանկը[5]: Բնակավայրերի անունների գրելաձևերը տալիս ենք ըստ 1913 թ. Սղերդի առաջնորդարանի վիճակագրական ցուցակի՝ բնագրի դասական ուղղագրությամբ: Այն դեպքում, երբ տվյալ բնակավայրի անունը վիճակացույցի ցուցակում բացակայում է, մենք առաջնորդվել ենք այլ կարևոր սկզբնաղբյուրի կողմից տրվող գրելաձևով՝ դրա մասին համապատասխանաբար նշելով ծանոթագրության մեջ: Առանձին դեպքերում տվել ենք բնակավայրի անվան տարընթերցումները:

Ըստ բովանդակության՝ Սղերդի գավառի, Բիթլիսի նահանգի և Օսմանյան կայսրության այլ շրջանների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները կարելի է բաժանել երեք խմբի՝ զուտ տների (ծուխ, ընտանիք) թիվը ներկայացնող տվյալներ, զուտ շնչերի (մարդ) թիվը ներկայացնող տվյալներ, և՛ ծխերի, և՛ շնչերի թիվը պարունակող տվյալներ:

Երբ աղբյուրը ներկայացնում է միայն տների թիվը, շնչերի թիվը ստանալու նպատակով անհրաժեշտություն է առաջանում հաշվարկել մեկ տանն ապրողների միջին թիվը և բազմապատկել տների ընդհանուր թվին: Արևմտահայության ժողովրդագրական հարցերով զբաղվող տարբեր ուսումնասիրողներ որպես նման միջին թիվ ընդունել են 6-ից 8, կամ ավելի: Կարծում ենք, որ Սղերդի գավառի պարագայում շնչերի միջին թիվը 9 է: Դա մենք կարող ենք հիմնավորել՝ ելնելով հետևյալ երկու հիմնական նկատառումներից.

1. Աղբյուրներում բազմաթիվ են վկայությունները Արևմտյան Հայաստանի, հատկապես Սասունի, Մուշի և Սղերդի շրջաններում բնակվող հայ ընտանիքների բազմանդամության վերաբերյալ[6]:
2. Այն դեպքում, երբ սկզբնաղբյուրը պարունակում է և տների, և շնչերի թիվը, մեկ տանը բաժին է ընկնում միջինը 9 կամ անգամ 10 շունչ:

---

4 Մասնավորապես, Օսմանյան կայսրության ժողովրդագրության հարցերով զբաղվող ամերիկացի ուսումնասիրող Ջասթին Մաք-Քարթին, որը հայտնի է նաև Հայոց ցեղասպանության ժխտողական իր հայացքներով, հաղորդում է, որ թուրքական արխիվներում տեսել է ըստ շնչերի և տների ոչ մահմեդական բնակչության հաշվառման տվյալները, սակայն ի վիճակի չի եղել դրանցից օգտվելու, քանի որ այդ նյութերն իբր «դասակարգված չէին» (տե՛ս Justin McCarthy, *Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire* (New York and London: N.Y. University Press, 1983), 84):

5 *Հայկական համառոտ հանրագիտարան*, հ. 1 (Երևան, ՀԽՀ գլխ. խմբ., 1990), 532-535:

6 Դրա մասին մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը,* 33-34:

Նախքան բուն շարադրանքին անցնելը, անհրաժեշտ ենք գտնում նաև առանձնացնել ուսումնասիրության առարկա հարցին առնչվող հետևյալ կարևոր իրողությունը: Սղերդի գավառը պատկանում է Արևմտյան Հայաստանի՝ վիճակագրական առումով առավել քիչ ուսումնասիրված շրջանների թվին: Հարցով զբաղվող հեղինակները արձանագրում են գավառի հայ և այլազգի բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական կանոնավոր ցանկերի պակասի փաստը: Այսպես, ռուս ուսումնասիրող Վ. Մանսկին նշում է, որ եթե Բիթլիսի նահանգի Բիթլիսի և Մուշի գավառների պարագայում իր տրամադրության տակ ունեցել է մի քանի աղբյուրներ, ինչպես նաև հենվել է սեփական դիտարկումների վրա, ապա Սղերդի և Գենջի գավառների բնակչության թվաքանակը և ազգային կազմը որոշելու համար ստիպված է եղել ապավինել միայն ֆրանսիացի վիճակագիր Վ. Քինեի (նրա մասին կխոսվի հաջորդիվ) և օսմանյան սալնամեների[7]՝ իրար հակասող տվյալներին[8]: Սղերդի գավառին վերաբերող վիճակագրական տվյալների բացակայության մասին է խոսում նաև հայ ուսումնասիրող Կարո Սասունին[9]:

Ուսումնասիրության առարկա ժամանակաշրջանում Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի Սղերդի եկեղեցական-թեմական կառույցների համար հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքման գործը դժվարանում էր նաև նրանով, որ հայերը գավառում բնակվում էին ոչ համախումբ՝ հայաբնակ բնակավայրերը գտնվում էին իրարից անջատ, ցրված էին ամբողջ գավառի տարածքով[10]: Ճուտ հայաբնակ գյուղերը շատ չէին, հայերը հիմնականում բնակվում էին խառը՝ քրդերի հետ: Որոշ քրդաբնակ բնակավայրերի պարագայում հայերը չունեին կայուն ներկայություն, բնակվում էին մեկ-երկու ընտանիքով որպես մարաբաներ (հողի վարձակալներ) կամ արհեստավորներ՝ թողնելով տվյալ բնակավայրը հալածանքի վտանգի[11] կամ գործի պակասի պատճառով: Սրանից ելնելով՝ Սղերդի գավառի

7 «Սալնամե» էին կոչվում օսմանյան կենտրոնական և նահանգային իշխանությունների կողմից հրատարակվող պաշտոնական տարեգրքերը, որոնք տեղեկություններ էին պարունակում Օսմանյան կայսրության և/կամ նրա առանձին վարչական միավորների վարչատարածքային բաժանման, բնակչության, տնտեսության և ֆինանսների վերաբերյալ:

8 Владимир Маевскій, *Военно-статистическое описаніе Ванскаго и Битлисскаго вилаетовъ.* Статистическій очеркъ, (Тифлисъ: Типографія Штаба Кавк. воен. окр., 1904), 222, նույնը, Отдѣлъ приложеній, 140-141:

9 Կարո Սասունի, *Պատմութիւն Տարօնի աշխարհի* (Պէյրութ, Տարօն-Տուրուբյան հայրենակց. միութ. կեդր. վարչ., տպ. Սևան, 1956), 361:

10 Սղերդի առաջնորդական տեղապահ Գէորգ վարդապետ Նալբանդյանի՝ 1913 թ. դեկտեմբերի 14-ով թվագրված նամակը, որը նա ուղարկել է որպես ուղեկցող նամակ Սղերդի թեմի վիճակացույցի ցուցակներին կից Կ.Պոլսի Հայոց պատրիարքարան (ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, f. 31): Հատկանշական է, որ 1913 թ. Սղերդի թեմից Պատրիարքարան ուղարկված վիճակացույցի ցուցակում նշված է միայն հայ տների թիվը, շնչերի թիվը բացակայում է (տե՛ս ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 63-78):

11 Նշենք, որ Սղերդի գավառը Համիդյան կոտորածների ժամանակ Արևմտյան Հայաստանի առավել տուժած շրջաններից էր: Ըստ Սղերդի թեմից ստված տեղեկագրերի՝ Սղերդ քաղաքում և գավառում կոտորածները տեղի են ունեցել 1895 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Դրանց ընթացքում, մասնավորապես, ջարդվել և բռնի իսլամացվել է Էրուռի գավառակի 12 և Շիրվանի գավառակի 20 հայաբնակ բնակավայրերի հայ բնակչությունը (տե՛ս «Հայաստանեայց եկեղեցին

պարագայում քիչ թիվ չեն կազմում այն բնակավայրերը, որոնք չեն երկրորդվում մի քանի տարիների տարբերությամբ կազմված հայ բնակչության տարբեր վիճակագրական ցուցակներում, և ուսումնասիրողը շատ դեպքերում հնարավորություն չունի տվյալ ժամանակին վերաբերող զուգահեռ աղբյուրների միջոցով ստուգելու՝ արդյո՞ք ցուցակից տվյալ բնակավայրի բացթողումը հայ բնակչության շարժի օբյեկտիվ իրողության արտացոլման, թե՞ ցուցակի պակասավոր լինելու արդյունք է: Այսինքն, շատ դեպքերում պարզ չէ, թե արդյոք որևէ բնակավայր, որը նախկին տարիների մարդահամարների և հաշվառումների վիճակագրական ցուցակներում վկայված է որպես հայաբնակ, սակայն Մեծ եղեռնին առավել մոտ՝ 1913 թ. Սղերդի առաջնորդարանի վիճակացույցի ցուցակում բաց է թողնված, Մեծ եղեռնի նախօրյակին հայաբնակ էր, թե՞ ոչ: Այս իրողությունը դարձնում է Հայոց ցեղասպանության նախօրյակի Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի փորձը որոշ չափով խոցելի և հետագայում հնարավոր նոր սկզբնաղբյուրների ներգրավման միջոցով ճշտման ենթակա:

I. Սղերդի գավառի վարչատարածքային բաժանումը XIX դարի վերջին – XX դարի սկզբին

Սղերդի գավառի տարածքները օսմանյան տիրապետության տակ են անցնում XVI դարի սկզբներին՝ ընդգրկվելով Դիարբեքիրի նահանգի կազմում:

XIX դարի երկրորդ կեսին և, հատկապես, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո օսմանյան իշխանությունները շարունակական փոփոխությունների են ենթարկում Արևմտյան Հայաստանի վարչատարածքային բաժանման համակարգը: Այդ գործընթացի համատեքստում՝ 1878-1879 թթ. ստեղծվում է Բիթլիսի վիլայեթը, որի մեջ ընդգրկվում են Վանի և Դիարբեքիրի վիլայեթներից առանձնացված տարածքներ, այդ թվում՝ 1880 թվականին՝ Սղերդի սանջակը[12]:

Բիթլիսի նահանգի ստեղծումից հետո օսմանյան իշխանությունները 1880-90-ական թթ. արդեն ձեռնամուխ են լինում նրա առանձին վարչատարածքային միավորների, այդ թվում՝ Սղերդի գավառի վարչական սահմանների շարունակական վերաձևումների, որոնց հիմնական նպատակներից մեկն էր մահմեդական ազգաբնակչության համեմատ հնարավորինս փոքրաթիվ հայ բնակչությամբ վարչական միավորների ստեղծումը և դրանով հայերին Արևմտյան Հայաստանում որպես փոքրամասնություն ներկայացնելը[13]: Այսպես, եթե ըստ 1884-85 թթ. սալնամեի տվյալների՝ Սղերդի գավառը բաղկացած էր 6 գավառակներից՝ Սղերդ, Շիրվան, Էրուհ, Բարվար, Ռենդվան, Խար-

---

Տաճկաստանում», *Արարատ ամսագիր* ԻԹ տարի Բ (1896), 89-90): Հետագա տարիներին, Սղերդի բռնի իսլամացված հայերի հիմնական մասը վերադարձել է քրիստոնեությանը:

12 Բիթլիսի և Մուշի սանջակները առանձնացվել են Վանի նահանգի կազմից 1878 թ.: Մուշի սանջակը նախքան վերջնականապես Բիթլիսի նահանգի կազմում ընդգրկվելը, մի կարճ ժամանակով՝ 1881-1883 թթ., նորից հիշատակվում է Վանի նահանգի կազմում (տե՛ս Birken Andreas, *Die Provinzen des Osmanischen Reiches* (Wiesbaden: Dr. Ludwig Reichert verlag, 1976), 184):

13 Արևմտյան Հայաստանում օսմանյան իշխանությունների վարչատարածքային քաղաքականության մասին մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը*, 52-57:

զան[14], ապա արդեն երկու տարի անց, ռուս ուսումնասիրող Ա. Գիպիուսը, որպես սկզբնաղբյուր վկայակոչելով Էրզրումի նահանգի 1888 թ. սալնամեն, հաղորդում է, որ Սղերդի գավառը բաղկացած է 7 գավառակներից՝ Սղերդ, Շիրվան, Աղաքիս (գավառակի կազմի մեջ էին մտնում Կեցանը, Ներքին Կարկառը և Սպարկերտը), Էրուհ, Բարվար, Ռեդվան և Խարզան[15]:

1880-ական թթ. վերջերին Բիթլիսի նահանգը ենթարկվում է վարչական նոր փոփոխությունների: Սղերդի գավառի Աղաքիսի գավառակը լուծարվում է, նրա կազմի մեջ մտնող Կեցանը, Կարկառը և Սպարկերտը ընդգրկվում են Բիթլիսի գավառի Խիզանի գավառակի կազմում: Նշված փոփոխությունների հետևանքով՝ Սղերդի գավառը 1890-ական թթ. սկզբներին արդեն բաղկացած էր 7 գավառակներից՝ Սղերդ, Ռեդվան, Շիրվան, Էրուհ, Խարզան, Բարվար և Հազո (Խաբլջոզ)[16]:

1890-ական թթ. երկրորդ կեսին Սղերդի գավառի սահմանները նորից են ենթարկվում փոփոխությունների՝ Ռեդվանը միավորվում է Խարզանի գավառակի հետ, իսկ Հազոն միացվում է Մուշի գավառի Սասունի գավառակին (1899 թ.): Այս փոփոխություններից հետո՝ 1900-ական թթ. սկզբներին, գավառի վարչական բաժանումը ստանում է այն տեսքը, որը պահպանվում է մինչև 1915 թվականը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության նախօրյակին Սղերդի գավառը զբաղեցնում էր Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի հարավային հատվածը՝ 7.090 քառ. կմ ընդհանուր տարածությամբ (Բիթլիսի նահանգի կազմում Սղերդի գավառի քարտեզը տես Հավելված 1): Նրա սահմաններն էին հյուսիս-արևելքից՝ Բիթլիսի գավառի Մոտկանի, Բիթլիսի և Խիզանի գավառակները, հյուսիս-արևմուտքից՝ Մուշի գավառի Սասունի գավառակը, արևելքից՝ Վանի նահանգը, իսկ հարավից և արևմուտքից՝ Դիարբեքիրի նահանգը: Գավառի տարածքը բաժանվում էր հինգ գավառակների, որոնք էին՝ Սղերդը (կենտրոնական գավառակ (թուրքերեն՝ մերկեզ կազա*),* 797 քառ. կմ տարածությամբ)՝, Էրուհը (1.992 քառ. կմ), Բարվարը (1.536 քառ. կմ), Խարզանը (1.570 քառ. կմ) և Շիրվանը (1.195 քառ. կմ)[17]:

XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին՝ նախքան Մեծ եղեռնը, Սղերդի գավառի տարածքն ամբողջությամբ ընգրկված էր Հայ Առաքելական Եկեղեցու Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի իրավասության տակ գործող Սղերդի եպիսկոպոսական թեմի կազմում[18]:

---

14 Justine MacCarthy, *The Arab World, Turkey and the Balkans, 1878-1914. A Handbook of Historical Statistics* (Boston: G.K. Hall, 1982), 16:

15 Алексе́й Гиппіусъ, *Статистическія таблицы вилайетовъ Турецкой имперіи, ближайшихъ къ Закавказью* (Тифлисъ: Типъ. канцъ. Главноначальствъ. гражд. частью на Кавказѣ, 1889), 12-13:

16 Vital Cuinet V., *La Turquie d' Asie,* v. 2 (Paris: Ernest Leroux editeur, 1891), 524:

17 McCarthy, *The Arab World, Turkey,* 21; նաև՝ Karpat Kemal, *Ottoman Population 1830-1914: Demographic and Social Characteristics* (Wisconsin: University of Wisconsin Press, 1985), 174: Գավառակների տարածություններն ըստ Маевскій, Военно-Статистическое описаніе, 12-13: Բիթլիսի նահանգի վարչական բաժանումն ըստ գաւառների և գաւառակների տե՛ս նաև *1904 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչյան Հիւանդանոցի Հայոց* (Կ.Պոլիս, տպագրութիւն Յ. Մատթէոսյան, 1904), 228:

18 Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը (Կ.Պոլիս,

II. Օսմանյան կառավարության վիճակագրական տվյալները Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ (1878-1914 թթ.)

Բիթլիսի նահանգի և նրա կազմում ընդգրկված Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան կառավարության վիճակագրական տվյալները բազմաբնույթեն. դա օսմանյան մարդահամարների և հաշվառումների տեղեկություններն են (1881/82-93, 1895, 1896, 1897, 1906, 1914 թթ.), օսմանյան նահանգային սալնամեների տվյալները (որպես կանոն այնտեղ տրված է ընդհանուր քրիստոնյաների թիվ՝ առանց ըստ կրոնական համայնքների (միլեթ) առանձին պատկանելության նշումով), մեծ տերությունների դիվանագիտական ներկայացուցիչներին տրամադրված վիճակագրություններ (1878-80, 1895-1897 թթ.): Ներկայացնենք օսմանյան տվյալներից մի քանիսը՝ պահպանելով ժամանակագրական կարգը.

1. 1881/82-1893 թթ. օսմանյան մարդահամարի տվյալներով գավառում հաշվառվել էր 11.971 շունչ առաքելադավան, 2.446 շունչ կաթոլիկ և 435 շունչ բողոքական[19], ընդամենը՝ 14.852 շունչ հայ բնակչություն[20]:
2. Համաձայն 1897 թ. օսմանյան տվյալների՝ գավառի հայ բնակչության թվաքանակը 12.857 էր, որից 3.049-ը կաթոլիկ, 449-ը բողոքական[21]:
3. 1906 թ. մարդահամարի տվյալներով՝ գավառի հայ բնակչության թիվն էր 9.630 շունչ, այդ թվում առաքելադավան հայեր՝ 6.666, կաթոլիկ հայեր՝ 2.596 և բողոքականներ՝ 368 շունչ[22]:
4. 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալներով (դրանք օսմանյան իշխանությունների կողմից շրջանառության մեջ են դրվել Առաջին աշխարհամարտից հետո՝ ի հիմնավորումն, որ հայերը Արևմտյան Հայաստանի տարածքում փոքրամասնություն են կազմում) գավառի հայ բնակչության թիվն էր 11.240 շունչ, որից առաքելադավան հայեր՝ 10.828 շունչ, բողոքականներ՝ 412 (կաթոլիկների թիվը չի հաղորդվում)[23]:

Այսպիսով, ըստ օսմանյան կառավարության տվյալների՝ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառում բնակվում էր առավելագույնը 11.240 հայ: Հետաքրքիր է տեսնել, որ 1880-ական թթ. հետո Սղերդի գավառի հայ բնակչության թիվը նվազման միտում է դրսևորել մինչև 1906 թ. (սա, անշուշտ, պայմանավորված էր առաջին հերթին

Վ. և Հ. Տէր-Ներսէսյան, 1911), 261-262: Տե՛ս նաև *1904 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչյան* Հիւանդանոցի Հայոց, 374-375: Սղերդի թեմի կազմավորման և ընթացքի մասին տե՛ս Արշակ Ալպոյաճյան, «Առաջնորդական վիճակներ», *1908 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչյան հիւանդանոցի Հայոց* (Կ.Պոլիս, 1908), 313-315, 346:

19 Հաշվի առնելով, որ Բիթլիսի նահանգի կաթոլիկներն ու բողոքականները բնակչությունը չնչին բացառությամբ ազգությամբ հայեր էին, օսմանյան աղբյուրներում առանց ազգային պատկանելության նշման հաղորդվող կաթոլիկների և բողոքականների թիվը գումարել ենք հայ բնակչության թվին:

20 Karpat, *Ottoman population 1830-1914*, 130:

21 Նույն տեղում, 196:

22 Նույն տեղում, 162:

23 Նույն տեղում, 174:

համիդյան կոտորածներով և դրա ժողովրդագրական հետևանքներով, ինչպես նաև, նվազ չափով, գավառի տարածքի վարչատարածքային փոփոխություններով):

Ինչպես արդեն նշել ենք, օսմանյան վիճակագրական տվյալների հիմքերը՝ օսմանյան իշխանությունների անցկացված մարդահամարների և հաշվառումների ցանկերը, առ այսօր չեն հրատարակված և հայտնի չեն հարցով զբաղվող հետազոտողներին, ինչը հնարավորություն չի ընձեռում համադրել դրանք հայկական վիճակագրական ցանկերի տվյալների հետ: Մինչդեռ, ինչպես ցոյց կտանք հաջորդիվ, գավառակ առ գավառակ հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տարբեր վիճակագրական ցանկերի տվյալների քննությունը ցույց է տալիս, որ օսմանյան տվյալները, որպես կանոն, չեն հաստատվում և ոչ մի հիմնական ու օժանդակ աղբյուրի կողմից, որոնք իրարից անկախ հաղորդում են ավելի բարձր թվեր:

III. Հայկական աղբյուրները Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ (1878-1914 թթ.)

III.1. Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներ

Հայկական հարցի շուրջ ընթացող զարգացումների շրջանակներում՝ 1878 թ. գարնանը Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ Բաղեշի, Մշո և Սղերդի առաջնորդարանները կազմել և Պատրիարքարան են ուղարկել իրենց թեմերի հայ բնակչության վիճակագրությունները: Համաձայն Սղերդից ստացված տվյալների՝ թեմը (Սասունի առանձին շրջաններ ներառյալ) ուներ 3.292 տուն, 36.212 շունչ հայ բնակչություն (այլ մանրամասներ չի հաղորդվում)[24]:

1878 թ. ամռանը Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ Բիթլիսի նահանգի հայ բնակչության հաշվառում է իրականացրել Արիստակես վարդապետ Տեկանցը[25]: Ըստ նրա տվյալների՝ Սղերդի գավառի հայ բնակչությունը 29.038 շունչ էր (ըստ գավառակների՝ որոշ վիճակագրական ցանկեր զետեղել ենք աշխատանքի համապատասխան բաժիններում)[26]:

Ժամանակագրական առումով գավառի հայ բնակչության՝ մեզ հայտնի հաջորդ ամբողջական հաշվառումը կատարվել է Մ. Օրմանյանի պատրիարքության օրոք՝ 1902 թ. (տեղեկագրի տիտղոսաթերթը և ամփոփումը տե՛ս Հավելված 2): Ըստ 1902 թ. հաշվառման՝ Սղերդի թեմի ցուցակի, գավառում կար 109 հայաբնակ բնակավայր՝ 1.884 տուն հայ բնակչությամբ (այդ թվում՝ 40 տուն՝ բողոքական, 2՝ կաթոլիկ), որն ըստ գավառակների բաշխվում էր հետևյալ կերպ՝ Սղերդ՝ 12 հայաբնակ բնակավայր, 390 տուն, Էրուհ՝ 11 հայաբնակ բնակավայր, 439 տուն, Բարվար՝ 11 հայաբնակ բնակավայր, 263 տուն, Շիրվան՝ 17 հայաբնակ բնակավայր, 184 տուն և Խարզան՝ 58 հայաբնակ բնակավայր, 593 տուն (ըստ գավառակների վիճակագրական

---

24 ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին 3, գործ 55, թ. 7:

25 Արիստակես Տէր-Սարգսենց (Տեկանց) (1844, Վան - 1896, Վարագ), արևմտահայ եկեղեցական գործիչ, բանահավաք:

26 Արիստակես Տեկանց, *Այցելություն ի Հայաստան 1878 թ.* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985), 90-91, 106-108, 126-127:

ցանկերը կներկայացվեն աշխատանքի՝ առանձին գավառակներին վերաբերող համապատասխան բաժիններում)[27]:

Ըստ Մ. Օրմանյանի պատրիարքության օրոք պատրաստված մեկ այլ վիճակագրության՝ գավառն ուներ 50 հայաբնակ բնակավայր՝ 25.500 հայ բնակչությամբ, որից 25.000-ը՝ առաքելադավան, 500-ը՝ կաթոլիկ[28]:

1912 թ. Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ստեղծված մարմնի՝ Ապահովության հանձնաժողովի կողմից պատրաստվեց երկու վիճակագրական աղյուսակ, որոնք արտացոլում էին Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի վեց նահանգների (այդ թվում՝ Բիթլիսի նահանգի) հայ բնակչության թվաքանակը 1882 և 1912 թվականների դրությամբ: 1882 թ. համար հայ բնակչության բաշխումն ըստ Բիթլիսի նահանգի գավառների բացակայում է[29], 1912 թ. տվյալներով Սղերդի գավառում հաշվվում էր 18.000 շունչ հայ բնակչություն (այլ մանրամասնություններ բացակայում են)[30]:

Հայկական հարցի վերաբացման համատեքստում՝ 1913 թ. փետրվարին Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը արևմտահայության նոր հաշվառում (մարդահամար) կատարելու շրջաբերական է ուղարկում Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի թեմեր (քանի որ ի կատարումն այս հրահանգի որոշ թեմերից վիճակագրական տվյալները պատրիարքարան են հասնում որոշ ուշացումով՝ մինչև 1914 թ. ամառ, պատմագիտական գրականության մեջ այս ձեռնարկը բնորոշվել է նաև որպես Կ.Պոլսի Հայոց պատրիարքրանի՝ 1913-1914 թթ. մարդահամար):

Մուշի եւ Բիթլիսի գավառներում մարդահամարը կատարվել էր 1913 թ. ամռանը, Սղերդի գավառում տվյալների հավաքման աշխատանքները տևել են ավելի երկար՝ մինչև աշնան վերջ, իսկ տվյալները Հայոց պատրիարքարան են ուղարկվել ավելի ուշ՝ 1913 թ. դեկտեմբերին (վիճակագրության լրացված թերթերից երկու նմուշ տե՛ս Հավելված 3-ում)[31]:

---

27 1902 թ. հաշվառման Սղերդի թեմի տեղեկագիրը տե՛ս ՀԱԱ, ֆ 412, ց. 1, գ. 1856:

28 Այս տվյալը առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել Մաղաքիա Օրմանյանի՝ 1911 թ. հրատարակված «Հայոց եկեղեցին» ուսումնասիրությանը կից (տե՛ս Օրմանեան, *Հայոց եկեղեցին,* 262), սակայն վիճակագրությունն ըստ երևույթին կազմվել է ավելի վաղ՝ 1906 թվականից ոչ ուշ, քանի որ 1906 թ. հրատարակված բելգիացի դիվանագետ վան դեն Սթինի «Ոչ մահմեդական օսմանահպատակների իրավական դրությունը» երկում զետեղված ըստ Օսմանյան կայսրության նահանգների առաքելադավան հայ բնակչության վիճակագրությունը, որը նրան տրամադրել էր Մաղաքիա Օրմանյանը, նույնական է «Հայոց եկեղեցին» աշխատության մեջ առկա տվյալներին: Տե՛ս Count F. van den Steen de Jehay, *De La Situation Légale des Sujets Ottomans Non-Musulmans* (Bruxelles: Oscar Schepens & Co, 1906), 51:

29 Leart Marcel, *La question Arménienne à la lumière des documents* (Paris: Challamel, 1913), 59: Տե՛ս նաև *Population Arménienne da la Turquie avant la Guerre. Statistiques* établies par le Patriarcat Arménien de Constantinople (Paris: Turabian, 1920), 9:

30 Թէոդիկ, *Ամենուն տարեցոյցը* (Կ.Պոլիս, տպագրութիւն Մ. Յովակիմյան, 1922), 261-262: Ապահովության հանձնաժողովի տվյալների մասին մանրամասն տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը,* 92-95:

31 Տե՛ս 1913 թ. դեկտեմբերի 14-ով թվագրված Սղերդի առաջնորդական տեղապահ Գէորգ վարդապետ Նալբանդյանի ուղեկցող նամակը, ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, f. 31:

Հասկանալի պատճառներով պատրիարքարանը չէր հասցրել հանրագումարի բերել և հրապարակել այս հաշվառման արդյունքները: Նշված մարդահամարի տվյալներն ըստ բնակավայրերի առաջին անգամ ամփոփել և գիտական շրջանառության մեջ են դրել ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռայմոն Հարություն Գևորգյանը և Պոլ Փաբուջյանը, որոնք նաև առանձին դեպքերում լրացրել են պակասող տվյալները այլ աղբյուրների կողմից հաղորդվող տեղեկությունների միջոցով: Համաձայն մարդահամարի տվյալների հիման վրա Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի կատարած հաշվարկի՝ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառում բնակվում էր 21.564 շունչ հայ բնակչություն (բաշխումն ըստ գավառակների կներկայացվի հաջորդիվ՝ աշխատանքի համապատասխան բաժիններում)[32]:

Այսպիսով, Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից շրջանառության մեջ դրված տվյալներով՝ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառում բնակվում էր շուրջ 20.000-25.000 հայ՝ թիվ, որը մոտ 2 անգամ բարձր է օսմանյան կառավարության կողմից հաղորդվող տվյալից: Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից հաղորդվող տվյալների պարագայում ևս կարելի է տեսնել օսմանյան վիճակագրության կողմից արձանագրված՝ 1878-1914 թթ. ընթացքում Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի նվազման միտումը:

III.2. Հայկական այլ աղբյուրներ

1878-1914 թթ. արևմտահայության թվաքանակի հարցին անդրադարձած հայ ուսումնասիրողներից Բիթլիսի նահանգի և այդ թվում՝ Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ են հաղորդում Վահան Պարտիզակցին, Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Կարո Սասունին և Սարգիս Կարայանը:

Նահանգի Մուշի և Սղերդի գավառների վիճակագրությունն է հաղորդում Վահան Պարտիզակցին[33]: Ըստ հեղինակի տվյալների՝ 1879 թ. Սղերդն ուներ

---

32 Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du génocide* (Paris: Editions d'Art et d'Histoire ARHIS, 1992), 60, 502-507: Անհրաժեշտ է նաև նշել, որ մարդահամարի որոշ տվյալներ և այլ վիճակագրություններ որպես աղբյուր 1920-21 թթ. օգտագործել է և արևմտահայ մտավորական Թեոդիկը՝ իր «Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին 1915 աղետալի տարին» ուսումնասիրության վրա աշխատելու ընթացքում (Սղերդի գավառի համար տվյալները տե՛ս Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին 1915 աղետալի տարին* (Նիւ Եորք, 1985), 90-94): Թեոդիկի տվյալները մենք նույնպես ներկայացնում ենք հոդվածի համապատասխան բաժիններում:

33 Վահան վարդապետ Տէր-Մինասյան (Վահան Պարտիզակցի), արևմտահայ մտաւորական, եկեղեցական գործիչ: Որպես Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի ներկայացուցիչ՝ 1870-80 թթ. ընթացքում մի քանի անգամ այցելել է Արևմտյան Հայաստանի գավառներ՝ հայ բնակչության թվաքանակի և սոցիալ-տնտեսական կացության վերաբերյալ տվյալներ հավաքելու նպատակով: Պարտիզակցին մեկն էր այն երեք վարդապետներից (մյուս երկուսը՝ Արիստակես Տեկանց և Գարեգին Սրվանձտյանց), որոնք 1878 թ. ամռանը պատրիարք Ներսես Վարժապետյանի կողմից ուղարկվել էին Արևմտյան Հայաստան՝ մարդահամար անցկացնելու հրահանգով (տե՛ս Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը,* 78-79, տե՛ս նաև Էմմա Կոստանդյան, «Վան-Վասպուրականի հասարակական-մշակութային գործիչները 19-րդ դարի II կեսին», *Քրիստոնյա*

40.000 շունչ հայ բնակչություն (ներառյալ Սասունի որոշ շրջաններ)[34]: Կ.Պոլսի «Մասիս» պարբերականի 1880 թ. նոյեմբերի 15-ի համարում տպագրված Վահան Պարտիզակցու մեկ այլ տվյալով՝ Սղերդի թեմում կար 114 հայաբնակ բնակավայր՝ 6.000 տուն հայ բնակչությամբ[35]: Հեղինակը նշում է, որ վիճակագրությունը քաղել է «*կէս պաշտօնական կամ անձնական կերպով գտած աղբյուրներէ*»[36]: Ըստ Վահան Պարտիզակցու՝ հայ բնակչության հստակ թվաքանակ տալ անկարելի է, «*վասնզի Թուրքիոյ մեջ անձ համրելը անհնար է, ոչ Օսմանյան պետությունը և ոչ ազգային որևէ իշխանություն կարող է առ այդ*»: Հեղինակի դիտարկմամբ մեկ տան շնչերի միջին թիվը գյուղերում պետք է ընդունել 8, իսկ քաղաքներում՝ 5-6 շունչ, ընդհանուր միջինը՝ 7 շունչ[37]:

Մկրտիչ Ավետիսյանը[38], 1890 թ. հրատարակած վիճակագրության մեջ, գավառում հաշվում է 75.000 շունչ հայ բնակչություն (այլ մանրամասնություններ բացակայում են): Հեղինակը նշում է, որ վիճակագրական աղյուսակը կազմելիս օգտվել է թուրքական, հայկական և արևմտյան մի շարք աղբյուրներից, այդ թվում «*Թուրքաց 1878ի Սալնամեն և 1889ին երկրին մեկ մասին պաշտօնապէս շինված ազգահամարը, Ազգային պատրիարքարանի պաշտօնյաների տեղեկագիրները, եվրոպական մի քանի կարևոր աշխարհագիրների վիճակագրությունները և ադոնց վրա ավելցունելով ստացված նորագոյն ծանօթություններ*» [39]:

Գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ է հաղորդել նաև անվանի հայ պատմաբան և վիճակագիր Ա-Դոն: Ուսումնասիրողի տվյալներով, որոնք նա հավաքել է 1909 թ. Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդության ժամանակ, Սղերդի գավառում կար 2.796 տուն, 19.072 շունչ հայ բնակչություն (առանց Խարզանի և Էրուհի գավառակների)[40]:

Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրօնական, լրատվական երկշաբաթաթերթ (Էջմիածին), դեկտեմբեր Ա 2010, թիւ 23 (331), 5, 7:

34 Վահան Վարդապետ Պարտիզակցի, *Խօսք զՀայրենեաց*, Բ. Տպագրութիւն (Կ.Պոլիս, տպ. Յ.Գ. Փալագաշյան, 1911), 47-48:

35 *Մասիս* (Կ.Պոլիս), 15/27 նոյեմբերի 1880, 1:

36 Նոյն տեղում:

37 *Մասիս*, 5/17 փետրվարի 1881, 1: 1878-81 թթ. հայկական բարեփոխումների անցկացման շուրջ ակտիվ քննարկումների փուլում Վահան Պարտիզակցին արևմտահայության թվաքանակի վերաբերյալ տվյալներ է տրամադրել նաև Օսմանյան Թուրքիայում հավատարմագրված եվրոպական տերությունների դիվանագետներին: Մասնավորապես, Վահան Պարտիզակցու կողմից Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Գաետանո Սոլանելլիին հաղորդած տվյալները (1881 թ.) երկրորդում են «Մասիսում» հրատարակված ցուցակը (տե՛ս Կ. Սոլանելլի, «Տեսութիւն ի վերայ գաւառաց Հայաստանի», *Բազմավէպ (Վենետիկ)*, 1882, հատոր Խ, 291): Ինչպես նշում է Սոլանելլին, վիճակագրական տեղեկությունները նրան տրամադրվել է «*յատուկ առաքելութեամբ մը շրջող անձէ մը գրեթէ հայերէն բնակված Տաճկաստանի ամեն գաւառներուն մէջ, ուստի և բնականապէս մեծագոյն ճշդության երևոյթ ունի*» (նույն տեղում, 290):

38 Մկրտիչ Ավետիսյան (Թերլեմեզյան, 1864 - 1896), XIX դարի հայոց ազատագրական շարժման գործիչ, լրագրող, Արմենական կուսակցության հիմնադիրներից մեկը:

39 Մ. Ա., *Թուրքիայի հայերն և իրենց դրացիներ* (Մարսէյլ, տպ. Մ. Փորթուգալյանի, 1890), 44:

40 Ա-Դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները,* 157 (ուսումնասիրողի՝ ըստ գավառակների

Մեծ եղեռնի նախօրյակին Բիթլիսի նահանգի հայ բնակչության թվաքանակի մասին տեղեկություններ է պարունակում «Ամբաստանագիր-տեղեկագիր Բաղէշի կուսակալության» գրությունը, որը կազմվել է 1919 թ. փետրվարին Հալեպում՝ Բիթլիսի նահանգի վերապրած հայության ներկայացուցիչների կողմից[41]: Համաձայն տեղեկագրի տվյալների՝ գավառում Մեծ եղեռնի կար շուրջ 30.000 հայ բնակչություն:

Վերոնշյալ տվյալներից որոշակի աղբյուրագիտական արժեք են ներկայացնում և կարող են օգտագործվել Մեծ եղեռնի նախօրյակին հայ բնակչության թվաքանակը ճշտելու հարցում Ա-Դոյի և «Ամբաստանագիր-տեղեկագրի» տվյալները: Ա-Դոյի տվյալները արժեքավոր են նրանով, որ դրանց միջոցով մեզ են հասել XX դարի սկզբնե-րում Վանի, Էզրումի և Բիթլիսի առաջնորդարաններում պահվող տեղեկագրերի տվյալները, որոնց բնագրերը այսօր կորած են[42]:

IV. Ռուս և արևմտյան ուսումնասիրողների վիճակագրական տվյալները Բիթլիսի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ

1878-1914 թթ. Բիթլիսի նահանգի և այդ թվում՝ Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ սկզբնաղբյուրային նշանակություն ունեն ֆրանսիացի վիճակագիր Վիտալ Քինեի, Վանում ռուսական փոխհյուպատոս Վլադիմիր Մանսկու, բրիտանացի դիվանագետ Վիլյամ Էվերեթի, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության հաղորդած տվյալները:

Օսմանյան ծառայության մեջ գտնվող[43] ֆրանսիացի վիճակագիր Վ. Քինեն, հիմնվելով օսմանյան պաշտոնական տվյալների վրա, 1892 թ. Սղերդի գավառի համար հաղորդում է 30.152 շունչ հայ բնակչություն, այդ թվում՝ 1.000 կաթոլիկ և 1.033 բողոքական (ըստ գավառակների հայ բնակչության բաշխումը կներկայացվի աշխատանքի համապատասխան բաժնում)[44]:

հաղորդած տվյալները տես աշխատանքի համապատասխան բաժիններում):

41 Տեղեկագիրը հրատարակվել է սփյուռքահայ ուսումնասիրող Լևոն Վարդանի կողմից: Տե՛ս «Ամբաստանագիր-Տեղեկագիր Բաղէշի կուսակալութեան», *Հայկազեան Հայագիտական Հանդէս* ԺԵ (1995), 530-545, բնակչության վիճակագրությունը տե՛ս նույն տեղում, 542: «Ամբաստանագիր-տեղեկագրի» կազման մասին տե՛ս նաև Ռոբերտ Թաթոյան, «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-1920 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 4, no. 1 (2016), 57-58:

42 Ա-Դոյի՝ Սղերդի գավառի առանձին գավառակներին վերաբերող տվյալները կներկայացնենք աշխատանքի համապատասխան բաժիններում: Ա-Դոյի վիճակագրական տվյալներին՝1912-14 թթ. հայկական մամուլում անդրադարձների մասին տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Մի քանի թվեր». Ա-Դոյի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» ուսումնասիրությունը (1912 թ.) և Հայկական հարցի վերարծարծման ժամանակաշրջանում արևմտահայության թվաքանակի հարցի շուրջ հայկական մամուլում ծավալված բանավեճը», *Ցեղասպանագիտական հանդես* 5, no. 1 (2017), 32-64:

43 Նա զբաղեցնում էր Օսմանյան պարտքի վարչության քարտուղարի պաշտոնը:

44 Cuinet, *La Turquie d' Asie,* 527: Քինեի տվյալներին անդրադարձել և վերլուծության են ենթարկել, մասնավորապես, հայ ուսումնասիրողներ Հայկազուն Գալստյանը և Սարգիս Կարայանը (տե՛ս Հայկազուն Գալստյան, «Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը՝ ըստ Վիթալ Քինեի վիճակագրության», *Մերձաւոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ* XII, Թուրքիա (1985), 59-79; Sarkis Y. Karayan, "Vital Cuinet's La Turquie d'Asie: A Critical Evaluation of Cuinet's Information

1895-1899 թթ. Վանում ռուսական փոխհյուպատոս Վլադիմիր Մանսկին[45], հիմնվելով Վ. Քինեի տվյալների վրա, Սղերդի գավառում հաշվում է 1.783 տուն և 27.667 շունչ հայ բնակչություն (առանձին գավառակներին վերաբերող հեղինակի տվյալները կներկայացնենք աշխատանքի համապատասխան բաժիններում)[46]:

Օսմանյան կայսրության և մասնավորապես Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1880-90-ական թթ. բրիտանական դիվանագետների կողմից կատարված հաշվարկները հանրագումարի են բերված «Քուրդիստանում» նախկին բրիտանական հյուպատոս գնդապետ Վիլյամ Էվերեթի կողմից 1895 թ. պատրաստած զեկուցագրում[47]: Էվերեթը հաղորդում է, որ Բիթլիսի, Մուշի և Սղերդի վերաբերյալ ամբողջական վիճակագրությունը հավաքվել է Վանում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս, կապիտան[48] Է. Քլայթոնի կողմից 1881 թ., իսկ 1895 թ. դրությամբ սահմանների համար՝ իր կողմից[49]: Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի համար Էվերեթի տվյալն է՝ 35.408 շունչ (բնակչության բաշխումն ըստ գավառակների բացակայում է)[50]:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո՝ 1919 թ. դեկտեմբերին, Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության Աշխարհագրական բաժնի կողմից պատրաստված վիճակագրական աղյուսակի տվյալների համաձայն՝ 1914 թ. դրությամբ Սղերդի գավառում կար 26.000 հայ (հայերի բաշխումն ըստ գավառակների բացակայում է)[51]: Աղյուսակի համար որպես տվյալների աղբյուր ծառայել է 1914 թ. օսմանյան պաշտոնական վիճակագրությունը, հունական և հայկական եկեղեցական աղբյուրների տրամադրած տվյալները և հատկապես ամերիկյան փորձագիտական խմբի Արևմտյան Ասիայի բաժնի փորձագետ պրոֆեսոր Դևիդ Մաժիի պատրաստած «Ասիական Թուրքիայի բնակչությունը պատերազմի նախօրյակին» տեղեկագիրը[52]:

Այսպիսով, ինչպես կարելի է տեսնել, Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող արևմտյան վիճակագրական տվյալները Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակը

about Armenians," *Journal of the Society for Armenian Studies* 11 (2000), 53-63): Տե՛ս նաև Ռոբերտ Թաթոյան, «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը XIX դարի 90-ական թթ. կեսերին Հայկական հարցի սրման ժամանակաշրջանում», *Ցեղասպանագիտական հանդես* 4 no. 2 (2016), 31:

45 Վլադիմիր Մանսկու մասին կենսագրական կարճ ակնարկը տե՛ս http://www.grwar.ru/persons/persons.html?id=6191, դիտվել է 31.03.2017:

46 Маевскій, *Военно-статистическое описаніе*, 220-223:

47 Մեծ Բրիտանիայի ազգային արխիվ, CAB 37/38/26 (Report on the population of Asia Minor and the Turkish Provinces to the eastward, compiled by Colonel William Everett, C.M.G., Assistant Adjutant-General, Intelligence Division, War Office, formerly Her Majesty's Consul for Kurdistan, May 11, 1895).

48 Զեկուցագիրը գրելու ժամանակ՝ արդեն գնդապետ:

49 Նույն տեղում, 230:

50 Նույն տեղում, 251:

51 Zamir Meir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919," *Middle Eastern Studies* 17, no. 1 (1981): 104:

52 Նույն տեղում, 87:

հաշվում են 26.000-35.000 շնչի սահմաններում: Նշենք, որ վերջին թիվն արտացոլում է 1880-ական թթ. իրողությունները՝ այսինքն նախքան համիդյան կոտորածները և Սղերդի գավառից հայաշատ Սասունի առանձին երկրամասների առանձնացման ժամանակաշրջանը: Հատկանշական է, որ նշված գրեթե բոլոր արևմտյան հեղինակները, թեև իրենց հաշվարկները կառուցել են օսմանյան կառավարության պաշտոնական տվյալների հիման վրա, չեն ընդունել դրանք որպես հավաստի, այլ վերանայել են դրանք՝ որպես իրականությանը մոտ ընդունելով հայ բնակչության թվաքանակի ավելի բարձր թվեր:

V. Հայոց ցեղասպանության նախօրյակին Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի հաշվարկ ըստ գավառակների

V.1. Սղերդի գավառակ

Համաձայն Ա. Տեկանցի (1878-80 թթ. Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի մարդահամար) տվյալների Սղերդի գավառակի հայ բնակչության թիվը 2.489 էր, որից 2.400-ն ապրում էր քաղաքում, մնացած 89-ը՝ գավառակի չորս հայաբնակ գյուղերում (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 1)[53]:

Վիտալ Քինեն (1891 թ.) Սղերդի գավառակում հաշվում է 1.204 տուն, 6.020 շունչ հայ բնակչություն, այդ թվում Սղերդ քաղաքում՝ 664 տուն, 3.320 շունչ[54]**:**

Վ. Մանսկին, իր հաշվարկի հիմքում դնելով Վ. Քինեի տվյալները և ավելացնելով դրանք 10%-ով, 1899 թ. համար գավառակում հաշվում է 6.622 հայ, որից 3.652-ը՝ Սղերդ քաղաքում, 2.970-ը՝ գավառակի հայաբնակ գյուղական բնակավայրերում:[55]

Ըստ 1902 թ. մարտ-նոյեմբեր ամիսներին կազմված Սղերդի առաջնորդարանի տեղեկագրի՝ Սղերդ քաղաքն ունէր 527 տուն հայ՝ շուրջ 5.000 շունչ բնակչությամբ, գավառակի թվով 11 հայաբնակ բնակավայրերում կար 63 տուն հայ (բաշխումը տե՛ս Աղյուսակ 1):[56]

1913 թ. Սղերդի առաջնորդարանի կողմից պատրաստած վիճակացույցի տվյալներով (1913-1914 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամար)՝ գավառակում որպես հայաբնակ նշվում է 10 բնակավայր՝ 533 տուն հայ բնակչությամբ (շնչերի թիվը չի նշվում), այդ թվում՝ 489 տունը՝ Սղերդ քաղաքում, 44 տուն՝ գավառակի 9 հայաբնակ գյուղերում (ըստ բնակավայրերի բաշխումը տե՛ս Աղյուսակ 1)[57]: Ըստ նույն տվյալների հիման վրա Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի հաշվարկի՝ գավառակն

---

53 Տեկանց, *Այցելություն ի Հայաստան*, 114:

54 Cuinet, *La Turquie d' Asie,* 600: Վ. Քինեի այս տվյալն օգտագործել է Ա-Դոն և Ա-Դոյին հետևելով, Կարո Սասունին (տե՛ս Ա-Դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները*, 153, տե՛ս նաև Սասունի, *Պատմութիւն Տարօնի աշխարհի*, 362):

55 Маевскій, *Военно-статистическое описаніе,* 140:

56 «Վիճակագրութիւն Սղերդի և իր թեմերուն», ՀԱԱ, ֆ 412, ց. 1, գ. 1856, թ. 2-4: Տեղեկագրում նշվում է, որ ըստ օսմանյան վիճակագրության՝ քաղաքի հայ տների թիվը 300 էր (նույն տեղում, թ. 2):

57 ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 63-65:

ունեցել է 4.437 շունչ հայ բնակչություն, որից 4.032-ը՝ Սղերդ քաղաքում[58]:

Հայկական այլ աղբյուրները հիմնականում հաստատում են պատրիարքարանի տվյալները: Այսպես, 1913 թ. Սղերդի առաջնորդարանի հաղորդած թիվը կլորացնելով օգտագործել է Թեոդիկը՝ Սղերդ քաղաքի համար հաշվելով 500 տուն հայ, որից 50-ը՝ բողոքական[59]:

Ըստ մեկ այլ արևմտահայ ուսումնասիրող Ս. Ծոցիկյանի, որը օգտագործել է վերապրածների հաղորդած տեղեկությունները, 1915 թ. դրությամբ Սղերդ քաղաքում ապրում էր շուրջ 6.000 հայ[60]:

Հիմք ընդունելով վերոնշյալ տվյալները՝ գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառակում կար շուրջ 550 տուն, 4.950 շունչ հայ բնակչություն, որից շուրջ 500 տուն, 4.500 շունչ՝ Սղերդ քաղաքում, 50 տուն, 450 շունչ՝ գավառակի՝ 1915 թ. դրությամբ որպես հայաբնակ վկայված 9 գյուղերում (մեկ տան վրա ընկնող շնչերի միջին թիվ՝9)[61]:

Աղյուսակ 1. Սղերդի գավառակի հայ բակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր	1878 թ. Ա. Տեկանց	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1913 թ. Սղերդի առաջնորդարան	
		շունչ	տուն	տուն	շունչ[62]
1	Սղերդ	2.400	527	489[63]	4032
2	Այնմիլք	24	5	-	-
3	Այնտար	-	10	3	-
4	Ավթէ	-	6	-	-
5	Բէլէք	-	4	-	-
6	Բրհուր	17	-	-	-

58 Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman*, 502-503:

59 Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան*, 90: Թեոդիկի այս տվյալն իր հաշվարկների հիմքում է դնում Ս. Կարայանը մեկ տան վրա հաշվելով 7 շունչ և, ըստ դրա, գավառակի համար ստանալով 3.500 շունչ հայ բնակչություն (Sarkis Y. Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914: A Geographic and Demographic Gazetteer* (London: Gomidas Institute, 2018), 208): Հետևելով Թեոդիկին՝ Սղերդ քաղաքում 500 տուն հայ բնակչություն է հաշվում նաև Գեղամ Բաղալյանը (տե՛ս Գեղամ Բաղալյան, «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին: Մաս յոթերորդ: Բիթլիսի նահանգի հարավ-արևելյան գավառները», *Վէմ համահայկական հանդես* 4 no. 56 (2016), XIX):

60 Սարգիս Ծոցիկեան, *Արևմտահայ աշխարհ* (Նիւ Եորք, տպ. Ա. Յ. Լէյլեկյան, 1947), 672:

61 1914-ի օսմանյան տվյալներով գավառակն ուներ 2.630 շունչ հայ բնակչություն (տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914,* 174):

62 Շնչերի թիվն ըստ Ռայմոնդ Գևորգյանի և Փոլ Փաբուջյանի:

63 Այդ թվում՝ 39 տուն հայ բողոքական:

7	Գազար	16	-	-	-
8	Գօթիպ	-	5	5	49
9	Դիհոգ (Տրհոք)	-	5	2	29
10	Թիլէ	-	5	3	28
11	Խուշէնան (Խօշէնա)	32	12	13	121
12	Հիսէնիք	-	5	2	20
13	Ճէֆֆէն	-	3	-	
14	Պէքէնտ	-	3	10	96
15	Տէկէլա	-	-	4	45
16	Տէրշիմշ	-	-	2	17
17	Քոշք	-	-	-	-
	Ընդամենը	**2.489**	**590**	**533**	**4.437**

V.2. Շիրվանի գավառակ

1878-1914 թթ. Շիրվանի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հիմնական վիճակագրական սկզբնաղբյուրների տվյալներն են.

1. Ա. Տեկանց (1878 թ.) 14 հայաբնակ բնակավայր՝ 1.569 շունչ հայ բնակչությամբ (ըստ բնակավայրերի բաշխումը տե՛ս Աղյուսակ 2)[64]:
2. Վ. Քինե (1891 թ.)՝ 4.113 շունչ հայ[65]:
3. Վ. Մաևսկի (որպես հիմք օգտագործելով Վ. Քինեի տվյալները, 1899 թ.)՝ 4.524 շունչ հայ[66]:
4. 1902 թ. Սղերդի առաջնորդարանի տեղեկագիր՝ 17 հայաբնակ բնակավայր, 184 տուն հայ (ըստ բնակավայրերի բաշխումը տե՛ս Աղյուսակ 2)[67]:
5. 1909 թ. Ա-Դո (որպես տեղեկությունների աղբյուր նշում է Աղթամարի կաթողիկոսարանի տեղեկագիրը)՝ 14 բնակավայր, 340 տուն, 2.380 շունչ հայ[68]:

---

64 Տեկանց, *Այցելություն ի Հայաստան*, 115 (բաշխումն ըստ բնակավայրերի), 126 (հանրագումարային տվյալ): Տե՛ս նաև «Նամակ Սղերտից», *Արձագանք գրականական եւ քաղաքական շաբաթաթերթ* (Թիֆլիս), 18 ապրիլ 1882, № 9, 136:

65 Cuinet, *La Turquie d' Asie*, 609:

66 Маевскій, *Военно-статистическое описаніе*, 222:

67 ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1856, թ. 12:

68 Հեղինակը հաղորդում է, որ տվյալները վերցրել է Աղթամարի կաթողիկոսարանի տեղեկագրից: Հաշվի առնելով XX դարի սկզբներին վերաբերող այլ ցուցակների համեմատ Ա-Դոյի ցուցակում առկա հայ բնակչության ավելի բարձր թիվը՝ չենք բացառում, որ ցուցակը, գուցե, ավելի վաղ ծագում ունի՝ կազմվել է 1880-ական թթ. և արտացոլում է նախքան համիդյան կոտորածներ գավառակի հայ բնակչության թվաքանակի պատկերը (տե՛ս Ա-Դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները*, 154): Շիրվանի գավառակի համար Ա-Դոյի տվյալը օգտագործվել է Կարո Սասունու (տե՛ս Սասունի, *Պատմութիւն Տարօնի աշխարհի*, 362) և Սարգիս Կարայանի (տե՛ս Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 214-215) կողմից: Վերջինս, հիմք ընդունելով Ա-Դոյի հաղորդած տվյալները և լրացնելով

6. 1913 թ. Սղերդի առաջնորդարանի վիճակացույց (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար)՝ 14 հայաբնակ բնակավայր, 173 տուն, 1.683 շունչ հայ (մեկ տանն ընկնող շնչերի միջին թիվը՝ 9,7)[69]:
7. Թեոդիկ (1914 թ.)՝ 15 հայաբնակ բնակավայր, 202 տուն հայ[70]:

Մեծ եղեռնի նախօրյակին Շիրվանի գավառակի հայ բնակչության մոտավոր թիվը որոշելու նպատակով համադրել ենք 1913 թ. Սղերդի առաջնորդարանի (1913-1914 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամար) և 1914 թ. Թեոդիկի ցուցակների տվյալները (տե՛ս Աղյուսակ 2): Ըստ վերոնշյալ երկու ցուցակների՝ որոշել ենք տների միջին թիվը բնակավայր առ բնակավայր և մեկ տան վրա հաշվել 9 շունչ: Ըստ վերոնշյալի՝ Մեծ եղեռնի նախօրյակին Շիրվանի գավառակի՝որպես հայաբնակ վկայված 17 բնակավայրերում կար 201 տուն, 1.809 շունչ հայ բնակչություն (կլորացված թիվ՝ 200 տուն, 1.800 շունչ)[71]:

Աղյուսակ 2. Շիրվանի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր[72]	1878 թ. Ա. Տեկանց	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1909 թ. Ա.-Դ-ո	1913 թ. Սղերդի առաջնորդարան		1914 թ. Թ.Էոդիկ	Մեր հաշվարկը	
		Շունչ	Տուն	Տուն	Տուն	Շունչ	Տուն	Տուն	Շունչ
1	Ավավ	-	10	-	-	-	-	-	-
2	Ալին (Դէրավէլ)	162	15	30	22	198	22	22	198
3	Գոնդէ-դիզան	-	-	10	-	-	-	-	
4	Խէնտէք	80	3	20	10	91	13	12	108

այն Թեոդիկի հաղորդած տվյալներով, գավառակի համար հաշվում է 388 տուն, 3.104 շունչ հայ բնակչություն (նույն տեղում, 215):

69 Ըստ Ռայմոնդ Գևորգյանի և Փոլ Փաբուջյանի կողմից ներկայացվող վիճակագրական ցուցակի (տե՛ս Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman*, 506): Դրա հետ մեկտեղ, ֆրանսահայ ուսումնասիրողները որպես գավառակի համար հայ բնակչության թվաքանակի հանրագումարային տվյալ հաղորդում են 19 հայաբնակ բնակավայր, 317 տուն, 2.853 շունչ հայ բնակչություն (նույն տեղում, 60):

70 Հաշվարկը մեր կողմից՝ ըստ Թեոդիկի գիւղացուցակի տվյալների (տե՛ս Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան*, 93, 539):

71 Ըստ օսմանյան վիճակագրական տվյալների՝ 1914 թ. գավառակն ուներ 1.169 հայ բնակչություն (տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 174):
Հայ ուսումնասիրող Գեղամ Բադալյանը հաղորդում է Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ գավառակում մոտ 7.000 հայ բնակչության առկայության մասին՝ չնշելով, սակայն, իր այս տվյալի և ոչ մի հիմք (տե՛ս Բադալյան, «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին: Մաս յոթերորդ», XXV):

72 Տեղանունների գրության ձևն ըստ 1902 թ. Սղերդի առաջնորդարանի տեղեկագրի և Ա.-Դ-ոյի ցանկերի:

5	Կէլին	24	12	10	8	72	9	9	81
6	Կուրինան (Կիւրէնա)	320	25	50	30	270	38	34	306
7	Ճում	49	12	-	10	89	10	10	90
8	Մադան	140	-	30	-	-	-	-	-
9	Մազօրան	162	-	-	-	-	-	-	-
10	Մզրէ	56	-	-	-	-	-	-	-
11	Մնար	-	3	-	-	-	-	-	-
12	Նըպին	160	12	50	-	135	15	15	135
13	Շըմէլան	-	-[73]	-	-	-	-	-	-
14	Պէյթ-Հարուն	-	-[74]		4	35	3	4	36
15	Պըրք	-	8	13	5	46	5	5	45
16	Պուխ	-	-	-	5	45	5	5	45
17	Սահրուս	120	-	-	-	-	-	-	-
18	Սէզէրս	11	20	20	20	181	25	22	198
19	Սէրիան	-	8	-	6	55	5	6	54
20	Սէրմէտ	-	8	-	-	-	-	-	-
21	Սըմխոր	-	5	7	5	44	-	5	45
22	Տարզըն	160	-[75]	-	-	-	3	3	27
23	Տէրըկ	-	8	15	6	53	7	7	63
24	Քեսսախ	-	-	5	-	-	-	-	-
25	Քիքան	80	30	60	41	369	41	41	369[76]
26	Քֆրա (Քիւֆրէ)	18	5	20	1	-	1	1	9
Ընդամենը		**1.542**	**184**	**340**	**173**	**1.683**	**202**	**201**	**1.809**

V.3. Խարզանի գավառակ

1878-1914 թթ. Խարզանի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հիմնական աղբյուրները հաղորդում են հետևյալ տվյալները.

1. 1878 թ. Ա. Տեկանց՝ 44 հայաբնակ բնակավայր, 8.280 շունչ հայ[77],

73 Նշվում է որպես հայաթափված:

74 Նշվում է որպես հայաթափված:

75 Նշվում է որպես հայաթափված:

76 Համաձայն Մեծ եղեռնի վերապրած, ծնունդով Կիկան գյուղից Յակոբ Գրիգորյանի վկայության՝ Առաջին աշխարհամարտի սկզբին բնակավայրում կար 60 տուն զուտ հայ, 520 բնակչով (տե՛ս *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, Հատոր II, Բիթլիսի նահանգ*, գլխավոր խմբ. Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 118):

77 Բնակավայրերի ցանկում ներառված են նաև Սասունի Հազոյի շրջանից բնակավայրեր (տե՛ս Տեկանց, *Այցելություն ի Հայաստան*, 116-117 (բնակավայրերի ցանկ), 126 (հանրագումարային տվյալ)): Տե՛ս նաև *Արձագանք*, 136:

2. Վ. Քինե (1891 թ.)՝ 3.600 շունչ հայ[78]:
3. 1899 թ. Վ. Մանսկի՝ 6.717 շունչ հայ[79],
4. 1902 թ. Սղերդի առաջնորդարան՝ 58 հայաբնակ բնակավայր, 608 տուն հայ (տվյալներն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 3)[80],
5. 1913 թ. Սղերդի առաջնորդարան (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամար)՝ 76 հայաբնակ բնակավայր, 942 տուն հայ (ըստ բնակավայրերի բաշխումը տե՛ս Աղյուսակ 3)[81]:
6. 1914 թ. Թեոդիկ՝ 64 բնակավայր, 922 տուն հայ (տվյալներն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 3):[82]

Վերոնշյալ տվյալներից խիստ տարբերվում է հայ ուսումնասիրող Վարդան Պետոյանի կողմից կազմված վիճակագրական ցուցակը, որը Խարզանի գավառակում ներկայացնում է 19 հայաբնակ բնակավայրի անուն՝ 1.883 տուն հայ բնակչությամբ[83], ինչպես նաև վերջերս գիտական շրջանառության մեջ դրված Վարազդատ Տերոյանի տվյալները՝ 33 բնակավայր 1.191 տուն հայ (տե՛ս Աղյուսակ 3)[84]:

Գավառակի համար Աղյուսակ 3-ում ներկայացված տարբեր վիճակագրական ցուցակների հաղորդվող տվյալները առանձին դեպքերում հակասական են, նշվում են բազմաթիվ հայաբնակ բնակավայրերի անուններ, որոնք չեն երկրորդվում: Տվյալների համաձայնեցման դեպքում հնարավոր շփոթից խուսափելու նպատակով՝ Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի հայ բնակչության թվաքանակի մեր հաշվարկի հիմքում դնում ենք 1913 թ. Սղերդի առաջնորդարանի վիճակացույցի (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամար) տվյալը՝ որպես նախաեղեռնյան վիճակն առավել ամբողջական և ընդգրկուն արտացոլող սկզբնաղբյուր՝ 76 հայաբնակ բնակավայր, 942 տուն (կլորացված թիվ՝ 940 տուն): Մեկ տան վրա հաշվելով միջինը 9 շունչ՝ ստանում ենք 8.460 շունչ հայ բնակչություն (կլորացված թիվ՝ 8.450 շունչ)[85]:

---

78 Cuinet, *La Turquie d' Asie*, 613:

79 Маевскій, *Военно-статистическое описаніе*, 222:

80 ՀԱԱ, ֆ 412, ց. 1, գ. 1856, թ. 12:

81 ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 65-68:

82 Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան,* 91-93, 539: Հաշվարկը մեր կողմից՝ ըստ Թէոդիկի գյուղացուցակի:

83 Վարդան Պետոյան, *Սասունի բարբառը* (Երևան, Հայկական ՍՍՌ գիտ. ակադ. հրատ., 1954), 187-190: Նույն ցուցակը տե՛ս նաև Սասունի, *Պատմութիւն Տարօնի աշխարհի*, 384:

84 Գեղամ Բադալյան, «Վարազդատ Տերոյանի վիճակագրական նյութերը Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ», *Բանբեր Հայաստանի արխիվների* 1 (2005), 219-220:

85 Նշված տվյալների հիման վրա Գևորգյանի և Փաբուջյանի կողմից կատարված հաշվարկով՝ 76 հայաբնակ բնակավայր, 927 տուն, 8.343 շունչ հայ բնակչություն (տե՛ս Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman*, 504-505): 1914 թ. դրությամբ գավառակի համար օսմանյան վիճակագրությունը հաղորդում է 4.332 հայ բնակչություն (Karpat, *Ottoman population 1830-1914*, 174):

Աղյուսակ 3. Խարզանի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1913 թ. Սղերդի առաջնորդարան	1914 թ. Թեոդիկ	Վ. Պետոյան	1914 թ. Վ. Տերոյան
		Տուն	տուն	տուն	տուն	տուն
1	Ամինօ	-	10	-	-	-
2	Այնգասր	10	8	3	-	-
3	Աշգատարան	-	6	6	-	-
4	Արանծ	3	4	4	-	-
5	Ափըքան	-	3	-	-	-
6	Բզեզիկ (Բեսիկ)	-	-	-	60	-
7	Գալհօգ	8	12	10	-	55
8	Գերդաշէն	5	-	-	-	-
9	Գօխան	2	4	8	-	20
10	Գոյսաթուն	-	3	-	-	-
11	Գուլիք	25	33	36	-	70
12	Գուպին	25	39	32	-	50
13	Գուրտըք	-	3	3	-	-
14	Դըրպէսան	-	4	-	-	-
15	Դլչէ	-	1	-	-	-
16	Դուսատաք (Տէսէտէք)	25	28	22	60	52
17	Զէվիկ	3	-	-	-	-
18	Զըման	-	8	5	-	-
19	Զըվընկ	8	11	7	-	-
20	Զօգ	25	30	200	200	150
21	Թախարի	8	8	1	-	22
22	Թափի	-	11	-	-	15
23	Լիճք	-	2	-	-	-
24	Խաթմա	7	-	-	-	-
25	Խանըգ	3	-	-	-	-
26	Խըրպան	6	-	-	40	-[86]
27	Խիլրքան	-	2	-	-	-
28	Խնտուք	15	6	11	-	-
29	Խողդար	5	-	-	-	-

86 Նշվում է որպես ասորաբնակ:

30	Կէօզէլտէր	8	22	22	40	23
31	Կրէ Հասան	6	9	-	-	-
32	Կրէ Զալօ	8	-	-	-	-
33	Կօմիքա	-	2	-	-	-
34	Հազնամիր	12	28	25	60	35
35	Հատհատք	30	46	44	-	45
36	Հարֆաս	-	13	9	-	-
37	Հաֆիք	-	5	-	-	-
38	Հըլէվի	-	2	-	-	-
39	Հըճրէ	3	-	-	-	-
40	Հըսհըս	5	9	9	-	-[87]
41	Հըրօրք	-	15	15	60	-
42	Հիսէյնի	-	5	3	-	-
43	Ղըրտուտ	-	8	3	-	-
44	Ճէզնէ	3	-	16	100	25
45	Ճէլտէքան	3	11	8	-	50
46	Ճէֆֆան	5	-	-	-	-
47	Ճիման	-	3	3	-	-
48	Ճմսարիկ	3	8	8	-	-
49	Ճոմանիկ	20	25	21	-	50
50	Ճուայզ	12	10	19	-	12
51	Մալաֆան	25	28	28	400	-
52	Մամլա	15	10	10	25	12
53	Մաշիկը	-	1	-	-	-
54	Մարիպ	3	-	-	-	-
55	Մարմարունա	5	6	6	-	-[88]
56	Մէլքիշան	30	40	36	-	60
57	Մըզէ	-	2	2	-	-
58	Միլիքան	15	15	16	-	-
59	Միրինան	-	12	27	-	40
60	Յոփ	20	20	20	50	55
61	Նազտար	7	3	1	-	32
62	Նորշէն	5	5	5	3	-
63	Շեխիւնս	-	5	5	-	-
64	Շքէվթա	5	-	-	-	-
65	Պալըքան	-	2	-	-	-
66	Պաճիֆտ	-	16	7	-	-

87 Նշվում է որպես ասորաբնակ:

88 Նշվում է որպես ասորաբնակ:

67	Պարինճ	12	40	27	60	40
68	Պարզան Ներքին	-	8	8	15	
69	Պարզան Վերին	4	10	10	40	15
70	Պեյպօ	3	-	-	-	-[89]
71	Պէնարին	-	4	-	-	-
72	Պէվաս	5	4	4	-	-
73	Պէրահ	5	35	35	-	20
74	Պիմէր	25	39	22	50	35
75	Պիրրգ	3	-	8	-	-
76	Պօլինտ	-	5	3	-	-
77	Ռնտուան	50	64	64	400	150
78	Սալաս	-	1	-	-	-
79	Սալիպա	-	4	4	-	20
80	Սըլընտ	-	25	23	200	40
81	Սըճան	2	2	2	-	-
82	Սըպիիք	15	15	12	-	32
83	Սօյտիգ	-	2	-	-	-
84	Վաստ	2	6	-	-	-
85	Տարօնլ	-	3	-	-	-
86	Տերա	5	-	-	-	-
87	Տէմսէրք	5	8	-	-	-
88	Տէրշուան	5	2	2	-	-
89	Փալոնի	8	8	8	-	26
90	Քանի Գուլ	-	20	9	-	-
91	Քանիշիրք	3	8	6	-	-
92	Քանիք	5	7	3	-	-
93	Քէլամէրան	5	-	-	-	-
94	Քուչալան	-	-	-	20	-
	Ընդամենը	**593**	**942**	**966**	**1.883**	**1.251**

V.4. Էրուհի գավառակ

Ըստ Վ. Քինեի (1891 թ.)՝ գավառակն ուներ 5.113 հայ բնակչություն[90]:

Վ. Մաևսկին (1899 թ.), որպես հիմք ընդունելով Վ. Քինէի տվյալները, գավառակի համար հաղորդում է 5.624 շունչ հայ բնակչություն[91]:

Սղերդի առաջնորդարանի 1902 թ. մարտի 12-ի տեղեկագրում թվարկվում են

89 Նշվում է որպես ասորաբնակ:

90 Cuinet, *La Turquie d' Asie,* 611:

91 Маевскій, *Военно-статистическое описаніе,* 222:

Էրուհի 11 հայաբնակ բնակավայրեր՝ 439 տուն հայ բնակչությամբ (բաշխումն ըստ բնակավայրերի տե›ս Աղյուսակ 4): Ծանոթագրության կարգով տեղեկագրում նշվում է, որ գավառակի հիմնականում տաճկաբնակ կամ քաղդեաբնակ (ասորի) այլ 50-ի մոտ գյուղերի մեջ էլ կան 1-2-ական տուն հայեր, որոնք չեն հաշվառվել և չեն ընդգրկվել ցուցակում[92]:

Ըստ Սղերդի առաջնորդարանի 1913 թ. վիճակացույցի (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար) տվյալների՝ Էրուհի գավառակի հաշվառված 26 հայաբնակ գյուղերում կար 508 տուն հայ[93]:

Թեոդիկը գավառակի համար հաղորդում է 670 տուն հայ, որից 600-ը գավառակի կենտրոն՝ Դէի բնակավայրում (տե՛ս Աղյուսակ 4): Չի կարելի բացառել, որ վերջին թիվը գուցե արտացոլում է նաև գավառակի բազմաթիվ՝ հիմնականում քրդաբնակ, գյուղերի հայկական փոքրաթիվ բնակչության հավաքական թվաքանակը[94]:

Հիմք ընդունելով վերոնշյալ տվյալները՝գտնում ենք, որ Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ Էրուհի գավառակի հայ բնակչության թվաքանակի հաշվարկի հիմքում կարելի է դնել Սղերդի առաջնորդարանի 1913 թ. հաշվառման (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. մարդահամար) տվյալը՝ 26 հայաբնակ բնակավայր, 508 տուն հայ (կլորացված թիվ՝ 510 տուն), որից մոտավորապես կեսը՝ գավառակի կենտրոն՝ Դեեի բնակավայրում[95]: Ինչպես և Սղերդի գավառի այլ վարչական միավորների պարագայում, մեկ տան վրա հաշվելով 9 շունչ՝ գտնում ենք, որ գավառակում Մեծ եղեռնի նախօրյակին կար շուրջ 4.600 շունչ հայ բնակչություն[96]:

---

92 «Վիճակագրութիւն Սղերդի և իր թեմերուն», ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ, 1856, թ. 5:

93 Հաշվարկը կատարվել է մեր կողմից ըստ մարդահամարի ցուցակի (տե՛ս ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 71-74): Գևորգյանը և Փաբուջյանը նույնպես ներկայացնում են մարդահամարի ցուցակը, սակայն անհասկանալի պատճառներով, որպես գավառակի հայ բնակչության հանրագումարային տվյալ նշում են 20 հայաբնակ բնակավայր, 377 տուն, 3.393 շունչ, ինչը չի բխում ուսումնասիրողների կողմից բերված ըստ բնակավայրերի տվյալներից (տե՛ս Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman*, 60, 506):

94 Տե՛ս Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան,* 93-94, 539:

95 Ըստ Մեծ եղեռնը վերապրած-փախստական Մարտիրոս Հովսեփի Կերոյանցի վկայության՝ Դեեիը 1915 թ. ուներ 300 տուն, 2.500 հայ բնակչություն (տե՛ս *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ*, 107):

96 Օսմանյան վիճակագրության տվյալներով՝ 1914 թ. Էրուհի գավառակն ուներ 1.890 շունչ հայ բնակչություն (տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 174):

Աղյուսակ 4. Էրուհի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր[97]	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1913-1914 թթ. Հայոց Պատրիարքարան	1914 թ. Թեոդիկ
		Տուն	Տուն	Տուն
1	Այն	-	2	-
2	Գէօղ	-	2	-
3	Դեհ րէպէն	8	25	-
4	Զախօ	8	-	-
5	Զվնկատեշաւ (Զրլընկ)	4	-	1
6	Թանչէ	-	3	-
7	Լոդէ	12	5	-
8	Կօվէշէր	-	5	-
9	Կետար	-	3	-
10	Կիրտարէ	-	2	-
11	Մահրէ	-	8	-
12	Մայտանէ օլիան	3	5	3
13	Շավիա	-	5	-
14	Շերրքան	5	5	-
15	Շէրնախ	30	40	32
16	Շէխ Շահալի	-	3	-
17	Շքաքա	-	3	-
18	Պէնատ	-	5	2
19	Պէրէվանա	-	5	
20	Սավատի	-	10	3
21	Սիրան	-	4	1
22	Տեշթա-լէլա	5	10	2
23	Տէհ	260	268	600
24	Տէհմէզին	-	14	-
25	Տերա-թէյթէնի	-	5	-
26	Տէրա-ֆոյգանի	-	6	-
27	Ռամորան	4	40	-
28	Ֆինտիք	100	25	26
	Ընդամենը	**439**	**508**	**670**

97 Էրուհի բնակավայրերի ցանկը տե՛ս նաև Բադալյան, «Արևմտյան Հայաստանի պատմա-ժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին: Մաս յոթերորդ», XXVIII-XXIX:

V.5. Բարվարի գավառակ

Վ. Քինեի տվյալներով (1891 թ.)՝ Բարվարի գավառակն ունէր 3.800 շունչ հայ բնակչություն[98]:

Վ. Մաևսկի (1899 թ., Վ. Քինեի տվյալի հիման վրա)՝ 4.180 շունչ հայ[99]:

Հայկական սկզբնաղբյուրները Մեծ եղեռնի նախօրյակին Բարվարի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հաղորդում են հետևյալ տվյալները.

1. 1902 թ. Սղերդի առաջնորդարան՝ 11 հայաբնակ բնակավայր, 263 տուն (բաշխումն ըստ բնակավայրերի տե՛ս Աղյուսակ 5)[100]:
2. Ա-Դո (1909 թ.)՝ 18 հայաբնակ բնակավայր, 539 տուն, 3.773 շունչ (տե՛ս Աղյուսակ 5)[101]:
3. Սղերդի առաջնորդարանի 1913 թ. վիճակացույց (Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. մարդահամար)՝ 14 հայաբնակ բնակավայր, 282 տուն հայ (տե՛ս Աղյուսակ 5)[102]:

Սղերդի առաջնորդարանի՝ 1913 թ. վիճակացույցի տվյալների համեմատությունը ցեղասպանությունը վերապրածների վկայություններում առկա տվյալների հետ ցույց է տալիս, որ դրանք իրարից էականորեն չեն տարբերվում[103]: Հաշվի առնելով վերոնշյալը՝ որպես Մեծ եղեռնի նախօրյակին գավառակի 14 հայաբնակ բնակավայրի համար հայ բնակչության թիվ ընդունում ենք 282 տուն, 2.538 շունչ[104] (կլորացված թիվ՝ 280 տուն, 2.550 շունչ)[105]:

---

98 Cuinet, *La Turquie d'Asie*, 615:

99 Маевскій, *Военно-статистическое описаніе*, 222:

100 ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ, 1856, թ. 5-6 (բնակավայրերի ցանկ), թ. 12 (հանրագումարային աղյուսակ):

101 Ա-Դօ, *Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայէթները*, 155: Հեղինակը հաղորդում է, որ տեղեկությունները քաղել է Աղթամարի կաթողիկոսարանի տեղեկագրից: Ա-Դոյի վիճակագրական ցանկից հանել ենք Էրուհի գավառակի Դեհ գյուղի տվյալը (200 տուն): Հաշվի առնելով XX դարի սկզբներին վերաբերող այլ ցուցակների համեմատ Ա-Դոյի ցուցակում առկա հայ բնակչության ավելի մեծ թիվը՝ չենք բացառում, որ նրա տվյալները վերաբերում են 1880-ական թթ. սկզբներին՝ արտացոլելով նախքան համիդյան կոտորածների իրողությունները:
Բարվարի գավառակի համար Ա-Դոյի տվյալները Բիթլիսի նահանգի հայ բնակչության թվաքանակի իրենց հաշվարկներում օգտագործել են Կ. Սասունին (տե՛ս Սասունի, *Պատմութիւն Տարօնի աշխարհի*, 362) և Ս. Կարայանը (տե՛ս Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 213-214): Վերջինիս հաշվարկով՝ գավառակը ցեղասպանության նախօրյակին ուներ 373 տուն, 2.611 շունչ հայ բնակչություն (նույն տեղում, 214):

102 ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 69-71:

103 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ*, 108-116:

104 Գևորգյանն ու Փաբուջյանը, հաշվելով մեկ տան վրա 9 շունչ, գավառակի համար նույնպես ստացել են 2.538 շունչ հայ բնակչություն (տե՛ս Kévorkian, Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman,* 505):

105 Ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալների՝ գավառակում բնակվում էր 1.326 հայ (տե՛ս Karpat, *Ottoman population 1830-1914*, 174):

Աղյուսակ 5. Բարվարի գավառակի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին

№	Բնակավայր	1902 թ. Սղերդի առաջնորդարան	1909 թ. Ա-Դօ	1913 թ. Սղերդի առաջնորդարան		1914 թ. Թեոդիկ
		Տուն	Տուն	Տուն	Շունչ[106]	Տուն
1	Ագուկ	20	20	20	182	10
2	Աստան Վերին	-	15	-	-	-
3	Աստան Ներքին	-	10	-	-	-
4	Ատէլ	-	50	-	-	-
5	Բօրմ	-	80	-	-	-
6	Դէմթաղ	-	20	-	-	-
7	Էլքէֆ	5	15	8	72	1
8	Խասխէր	25	30	20	180	25
9	Կեփ	-	12	-	-	-
10	Հալատ	-	-	-	-	5
11	Հէշշէդ	8	15	8	72	-
12	Մալիք	30	25	25	225	19
13	Շէքամէր	-	-	8	75	-
14	Պալիճան	20	15	18	162	15
15	Պէրոզ	-	20	-	-	-
16	Ռապանօքան	15	20	5	45	8
17	Սանօ	5	5	3	27	4
18	Սիմ	-	-	6	51	-
19	Սէրիէլ	-	-	3	27	-
20	Վէլաս	25	30	30	270	12
21	Տէշտիք	10	7	8	70	11
22	Օզիմ	200	150	120	1,080	101
	Ընդամենը	**363**	**539**	**282**	**2.538**	**211**

VI. Հաշվարկի ամփոփում և եզրակացություններ

Այսպիսով, Սղերդի առաջնորդարանի 1913 թ. վիճակացույցի (Հայոց պատրիարքարա-նի 1913-1914 թթ. մարդահամար) և նույն ժամանակաշրջանին վերաբերող այլ վիճա-կագրական աղբյուրների տվյալների համադրման և վերլուծության միջոցով մեր կողմից կատարված հաշվարկը ցույց է տալիս, որ Մեծ եղեռնի նախօրյակին Սղերդի գավառն ունեցել է 143 հայաբնակ բնակավայր՝ շուրջ 2.480 տուն, 22.350 շունչ հայ բնակչությամբ (ըստ գավառակների հայաբնակ բնակավայրերի, հայ տների և շնչերի բաշումը տե՛ս Աղյուսակ 6)[107]:

106 Շնչերի թիվն ըստ Գևորգյանի և Փաբուջյանի:

107 Հաշվարկի սահմանային սխալի գործակիցը մեր կարծիքով չի կարող գերազանցել +/-5%-ը:

Աղյուսակ 6. Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին ըստ գավառակների

№	Վարչական միավոր	Հայաբնակ բնակավայրեր	Տուն	Շունչ
1	Սղերդի գավառակ	10	550	4.950
2	Շիրվանի գավառակ	17	200	1.800
3	Խարզանի գավառակ	76	940	8.450
4	Էրուհի գավառակ	26	510	4.600
5	Բարվարի գավառակ	14	280	2.550
	Ընդամենը Սղերդի գավառ	**143**	**2.480**	**22.350**

Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակի համար մեր կողմից հաշվարկված թիվը (22.350 շունչ) շուրջ երկու անգամ բարձր է 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալից (11.240 շունչ), շուրջ 25%-ով՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության[108] տվյալից (18.000 շունչ) և մոտավորապես համապատասխանում է 1913 թ. Սղերդի առաջնորդարանի տվյալների հիման վրա ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի կատարած հաշվարկի արդյունքին (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Սղերդի գավառի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին ըստ տարբեր տվյալների

№	Վարչական միավոր	1911 թ. Մաղաքիա արք. Օրմանյան	1912 թ. Հայոց պատրիարքարան	1914 թ. օսմանյան	1913 թ. Սղերդի առաջնորդարան (1913-1914 թթ. Հայոց պատրիարքարանի մարդահամար)/Ռ. Գևորգյան, Փ. Փաբուջյան	Մեր հաշվարկը
-	-	Շունչ	Շունչ	Շունչ	Շունչ	Շունչ
1	Սղերդի գավառակ	-	-	2.630	4.437	4.950
2	Շիրվանի գավառակ	-	-	1.169	2.853	1.800
3	Խարզանի գավառակ	-	-	4.225	8.343	8.450
4	Էրուհի գավառակ	-	-	1.890	3.393	4.600
5	Բարվարի գավառակ	-	-	1.326	2.538	2.550
	Ընդամենը	**25.500**	**18.000**	**11.240**	**21.564**	**22.350**

Բացի հայերից, Սղերդի գավառում բնակվում էր մոտ 8.000 ասորի (նեստորական

108 Ժամանակագրական առումով Մեծ եղեռնի թվականին առավել մոտ կանգնած տվյալն է, որը շրջանառության մեջ է դրվել Հայոց պատրիարքարանի կողմից:

և քաղդեացի կաթոլիկ եկեղեցիների հետևորդներ), 66.000 մուսուլման (ճնշող մեծամասնությունը՝ քրդեր), ինչպես նաև 1.000 եզդի[109], ընդամենը՝ մոտ 100.000 մարդ: Այսպիսով, հայերը կազում էին Սղերդի գավառի ընդհանուր բնակչության մոտ 20-22%-ը, իսկ քրիստոնեադավան ասորիների հետ՝ մոտ 30%-ը:

Հայոց ցեղասպանության ընթացքում Սղերդի գավառի հայ և ասորի բնակչությունը գրեթե ամբողջությամբ բնաջնջվեց, եղեռնը վերապրեցին միայն տեղի հայության խլյակներ[110]:

Հավելված 1. Բիթլիսի նահանգի քարտեզ (Աղբյուր՝ «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ.2, Երևան, 1976, էջ 437**)**

109 Ըստ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության Աշխարհագրական բաժնի կողմից 1919 թ. դեկտեմբերին պատրաստված վիճակագրության (տե՛ս Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919," 104):

110 Հայոց ցեղասպանության ընթացքում Սղերդի գավառի հայ բնակչության կոտորածի մասին տե՛ս Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London-New York: I.B. Tauris, 2011), 339-340, ասորիների կոտորածի մասին՝ Joseph Yacoub, *Year of the Sword: The Assyrian Christian Genocide, A History* (Oxford: Oxford University Press, 2016), 116-117:

Հավելված 2. Սղերդի թեմի 1902 թ. վիճակագրական տեղեկագրի տիտղոսաթերթը և ամփոփումը (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 818, ց. 1, գ. 565):





[illegible]																	
[illegible]	12*	363	25	2	—	4+	1	2x	1	1	:1	1	8	1	2	5/0	20
[illegible]	11	439	—	—	—	8	—	2	—	—	[1]	—	—	—	—	—	
[illegible]	11	263	—	—	—	12	—	4	—	—	—	—	—	—	—	—	
[illegible]	17	184	—	—	1	80	—	1	—	—	—	—	—	—	—	—	
[illegible]	58	593	15	—	1	27	1	10	—	1	4	[1]	6	—	—	157	
[illegible]	109	1842	40	2	2	81	2	19	1	2	5	1	14	1	2	467	20

Հավելված 3. 1913-1914 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամարի՝ 1913 թ. Սղերդի թեմի վիճակագրության լրացված թերթերից երկու նմուշ (ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ff. 63-64):[111]





111 Փաստաթղթի լուսանկարների տրամադրման համար հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում Փարիզի ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի վարիչ Բորիս Աճեմյանին:

Robert A. Tatoyan,
PhD in History

ARMENIAN POPULATION NUMBERS IN THE SANDJAK OF SGHERT IN THE BITLIS VILAYET OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE

SUMMARY

Key words: Armenian Genocide, Armenian Question, Bitlis Vilayet, Sanjak of Sghert, Armenian population, statistics, demography.

The article attempts to enumerate of the Armenian population of the Sanjak of Sghert in the Bitlis vilayet of Western Armenia on the eve of the Armenian Genocide.

For this purpose 1) a general overview of the history of the administrative-territorial division of the sanjak is presented for the period preceding the Armenian Genocide (1878-1914), 2) the main Ottoman, Armenian, Russian and Western primary statistical sources on the size of the Armenian population of the sanjak are collated and presented for the period 1878-1914 and a general description of these data is given, 3) statistical data on the Armenian population have been collated and compared according to the small administrative-territorial units – the kazas of the Sghert sanjak, paying particular attention to primary statistical sources containing data on the distribution of the Armenian population by settlements. Our own calculations of the size of the Armenian population of the sanjak were made on the basis of, and through, comparison and comparative analysis of these data.

According to our calculations, based on the methodology mentioned above, on the eve of the Armenian Genocide there were 143 Armenian settlements in the Sghert sanjak, with about 2,480 Armenian households or 22,350 persons, including: the kaza of Sghert - 10 Armenian settlements, 550 households or 4,950 persons, the kaza of Shirvan - 17 Armenian settlements, 200 households or 1,800 persons, the kaza of Kharzan - 76 Armenian settlements, 940 households or 8,450 persons, the kaza of Erouh - 26 Armenian settlements, 510 households or 4,600 persons and the kaza of Bervari - 14 Armenian settlements, 280 households or 2,550 persons.

Роберт А. Татоян
кандидат исторических наук

ЧИСЛЕННОСТЬ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ САНДЖАКА СХЕРТ БИТЛИССКОГО ВИЛАЙЕТА ЗАПАДНОЙ АРМЕНИИ В ПРЕДДВЕРИИ ГЕНОЦИДА АРМЯН

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Армянский вопрос, Битлисский вилайет, санджак Схерт, численность армянского населения, статистика, демография.

В статье осуществлена попытка подсчета численности армянского населения санджака Схерт Битлисского вилайета Западной Армении накануне Геноцида армян.

С этой целью 1) был представлен общий обзор истории административно-территориального деления санджака за период, предшествующий Геноциду армян (1878-1914 гг.), 2) сгруппированы и представлены данные основных османских, армянских, российских и западных статистических первоисточников по численности армянского населения санджака за период 1878-1914 гг., дана общая характеристика этих данных, 3) были сгруппированы и сопоставлены статистические данные по армянскому населению по мелким административно-территориальным единицам – казам санджака, обращая особое внимание на статистические первоисточники, содержащие данные по распределению армянского населения по населенным пунктам, на основе и посредством сопоставления и сравнительного анализа этих данных осуществлен собственный подсчет численности армянского населения санджака.

Согласно нашему посчету на основе вышеуказанной методики, накануне Геноцида армян в санджаке Схерт было 143 армянонаселенных пункта, где было около 2.480 домов, 22.350 душ армян, в том числе: каза Схерт – 10 армянонаселенных пунктов, 550 домов и 4.950 душ, каза Ширван – 17 армянонаселенных пунктов, 200 домов, 1.800 душ, каза Харзан – 76 армянонаселенных пунктов, 940 домов, 8.450 душ, каза Эрух – 26 армянонаселенных пунктов, 510 домов, 4.600 душ и каза Бервари – 14 армянонаселенных пунктов, 280 домов, 2.550 душ.

REFERENCES

Alp'oyachean, Arshak. «Առաջնորդական վիճակներ», *1908 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչյան հիւանդանոցի Հայոց* [“The Dioceses” in 1908 *Extensive Calendar of Surb Prkich Armenian Hospital*]. Constantinople, 1908: 265-354;

Հայկական համառոտ հանրագիրարան, h. 1. [*Armenian Concise Encyclopedia*, Vol.1]. Yerevan: HKHH publication, 1990;

Badalyan, Gegham. «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին: Մաս յոթերորդ: Բիթլիսի նահանգի հարավ-արևելյան գավառները» [The Historical and Demographic Description of Western Armenia on the Eve of the Armenian Genocide]. *Vem Pan-Armenian Journal* 4 no. 56 (2016): I-XXXI;

Badalyan, Gegham. «Վարազդատ Տերոյանի վիճակագրական նյութերը Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ» [The Statistical Materials of Varazdat Teroyan on the Settlements of Western Armenia]. *Bulletin of the Armenian Archives* 1 no. 105 (2005): 212-220;

Galstyan, Haykazun. «Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը՝ ըստ Վիթալ Քինեի վիճակագրության» [The National Composition of the Population of the Western Armenia according to the Statistics of Vital Cuinet]. *The Countries And Peoples of the Near and Middle East, XII, Turkey* (Yerevan), 1985: 59-79;

Gippius, A. I. *Статистическія таблицы вилайетовъ Турецкой имперіи, ближайшихъ къ Закавказью* [Statistical Tables of Vilayets of Turkish Empire Adjacent to Transcaucasia]. Tiflis: Glavnonachal'stw, 1889;

Kostandyan, Emma. «Վան-Վասպուրականի հասարակական-մշակութային գործիչները 19-րդ դարի II կեսին» [The Public and Cultural Figures of Van-Vaspourakan of the Second Half of the 19th Century]. *Qristonya Hayastan* (Etchmiadzin), December, 2010;

M. A. *Թիւրքիայի հայերն եւ իրենց դրացիներ* [Armenians of Turkey and Their Neighbours]. Marcelle: M. P'ort'ugalian publ., 1890;

Mayevsky, Vitaliï. *Военно-статистическое описаніе Ванскаго и Битлисскаго вилаетовъ.* Статистическій очеркъ [Military and Statistical Description of Van and Bitlis Vilayets]. Tiflis: Tipografia shtaba Kavkazskogo voennogo okruga, 1904;

Ormanean, Maghakia. *Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը* [The Armenian Church: Her History, Doctrine, Rule, Discipline, Liturgy, Literature and Present Condition]. Constantinople: V ev H. Tér-Nersésian, 1911;

Partizakts'i, Vahan Vardapet. *Խօսք զՀայրենեաց* [Word on Homeland], 2nd edition. Constantinople, 1911;

Petoyan, Vardan. *Սասունի բարբառը* [The Dialect of Sasoun]. Yerevan, Armenian SSR, Academy of Sciences, 1954;

Sasuni, Karo. *Պատմութիւն Տարօնի աշխարհի* [History of Taron]. Beyrut: Taron Turubyan Union, 1956;

Solanelli, K. «Տեսութիւն ի վերայ գաւառաց Հայաստանի» [Survey of the Armenian Regions]. *Bazmavep* (Venice), vol. 40, 1882: 289-298;

T'at'oyan, Robert. *Արևմտահայության թվաքանակի հարցը* 1878-1914 թվականներին [The Question of Western Armenian Population number in 1878-1914]. Yerevan: AGMI, 2015;

T'at'oyan, Robert. «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-

1920 թթ.)» [The Questions of Number of Western Armenians and Ethnic Composition of Population of Western Armenia at the Paris Peace Conference in 1919-1920]. *Journal of Genocide Studies* 4 no. 1, (2016): 44-82;

T'at'oyan, Robert. «Մի քանի թվեր». Ա-Դօյի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները» ուսումնասիրությունը (1912 թ.) և Հայկական հարցի վերարծարծման ժամանակաշրջանում արևմտահայության թվաքանակի հարցի շուրջ հայկական մամուլում ծավալված բանավեճը» ["A couple of figures." The Study of A-Do "Van, Bitlis and Erzeroum vilayets" (1912) and Western Armenian Population Figure Debate in the Armenian Press during the Period of Armenian Reform Package Negotiations in 1912-1914]. *Journal of Genocide Studies* 5 no. 1 (2017): 32-64;

T'at'oyan, Robert. «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը XIX դարի 90-ական թթ. կեսերին Հայկական հարցի սրման ժամանակաշրջանում» [The Questions of Number of Western Armenians and the Ethnic Composition of the Population of Western Armenia During the Period of the Aggravation of the Armenian Question in the mid-90s of the XIX century]. *Journal of Genocide Studies* 4 no. 2 (2016): 7-42;

T'eodik. *Ամենուն տարեցոյցը* [Calendar for Everyone]. Constantinople, 1922;

T'eodik, *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին 1915 աղետալի տարին* [Golgotha of the Armenian Clergy and its Flock in Catastrophic 1915]. New York, 1985;

T'evkants', Aristakes. Այցելություն ի Հայաստան 1878 թ. [Journey to Armenia in 1878]. Yerevan: ArmSSR, Academy of Sciences, 1985;

T'sots'ikian, Sargis. *Արևմտահայ աշխարհ* [The World of Western Armenia]. New York: A. I. Léilekian publ., 1947;

1904 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչյան Հիւանդանոցի Հայոց [1904 Extensive Calendar of Surb Prkich Armenian Hospital]. Constantinople, 1904;

«*Ամբաստանագիր-Տեղեկագիր Բաղէշի կուսակալութեան*» [Accusatory Report of Bitlis Vilayet]. *Haigazian Armenological Review* 15 (1995): 530-545;

«Հայաստանեայց եկեղեցին Տաճկաստանում» [The Armenian Church in Turkey]. Ararat (Etchmiadzin), Febrary, 1896: 87-92;

Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, Հատոր II, Բիթլիսի նահանգ, գլխավոր խմբ. Ամատունի Վիրաբյան [*The Armenian Genocide in the Ottoman Turkey. The Testimonies of Surviviors. Collection of documents, vol. II. Vilayet of Bitlis*, edt. Amatuni Virabyan]. Yerevan: Armenian National Archive, 2012;

«*Մասիս*» [Masis], (Constantinople), November 15/27, 1880;

«*Մասիս*» [Masis], (Constantinople), February 5/17, 1881;

«Նամակ Սղերտից» [Letter From Sghert]. *Ardzaganq Literary and Political Weekly* (Tiflis), April 18, 1882, № 9: 135-137.